№ 193 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 193

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ. Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Բամոյեանց ս. Գէորգ օրիորդաց դպրոցում

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ԿԱԶՄՎԱԾ Է։

Նրանք, որոնք հրաւէր չեն ստացել, թող բարեհաճեն ետ ստանալ իրանց վկայականները դպրոցի գրասենեակում՝ Казначейская ул. № 7.

V և VI բաժանմունքներում ընդունելութիւնը շարունակվում է։

ստ. 603. 3—3

ԿՈՒԿԻՈՅ ս. Աստուածածնի ծխ. երկու սեռի դպրոցի նորաբաց առաջին զուգ. դասարանում ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է։ Դասարանը կը բացվի այն դէպքում, երբ աշակ.-աշակերտուհիների թիւը հասնի առնուազն 40-ի։ ՈՒՍՈՒՄՆԱՎՃԱՐԸ 20 ր.։ Խնդիրները պէտք է շտապել ներկայացնել դպրոցիս աւագ-ուսուցչին (Միքայէլեան պր. 8)։

Հոգաբարձութիւն

ստ. 605. 3—2

Ցիւրիխի համալսարանի

ԲԺԻՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕԹՕՐԱՔՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌՕՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ստ. ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29

ստ. (ա. օ.) 504. 100—28

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, փարփորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։

Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։

(ա. օ.) ստ. 515. 100—19

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանանց և թէ ծերերի, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։ Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզօրով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկի
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

(չ. ու. կ.) ստ 970. 100—82

ԵՐԴՈՒԵԱԼ-ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

ՅՈՎՍԷՓ ՂՈՐՂԱՆԵԱՆ

տեղափոխվեց Դավիդովսկայա փ. տ. № 5.

ստ. 606. 2—2

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

31 օգոստոսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Օգոստոսի 29-ին ծովամերձ շրջանում հրացանաձգութիւն էր։ Օլթիի ուղղութեամբ՝ Արկինսի մօտ մեր հետախոյզ զօրախմբերը վանեցին թիւրքերին քարանձաւների միջից։

Մնացած զօրաճակատում փոփոխութիւն չը կայ։

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԵԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

31 օգոստոսի

ԱԹԷՆՔ.—Միտիլէնից հաղորդում են, որ դաշնակիցները նոր զօրքեր են ափ հանել Գալիպօլի թերակղզում։

Գերմանական մի սուզանաւ ջրասուզվել է Միտիլէնի և Մուդրոսի միջև ֆրանսիական հակատորպեդանաւից։

ՓԱՐԻԶ. Պաշտօնական հաղորդագրութիւն.—Դարդանելում վերջին օրերը բոլորովին հանգիստ անցան. Թիւրքերը հիւսիսային մասում մի քանի անգամ ուժեղ կրակ էին սկսում, բայց խրամատներից դուրս չէին գալիս։ Հարաւային մասում ոչինչ աչքի ընկնող գործողութիւն տեղի չունեցաւ, բացի այն, որ մեր մորտիրները ոչնչացրին երկու փոքր բերդ և զգալի կորուստներ պատճառեցին թշնամուն։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ամերիկեան «Wordi» լրագրի թղթակիցը նկարագրում է Կ. Պոլսի մօտ անգլիական սուզանաւերի երևալու մանրամասնութիւնները։ Անգլիական սուզանաւերը վաղուց արդէն հանդիսանում են Մարմարա ծովի լիակատար տէրը. ոչ մի թիւրքական ռազմանաւ չէ անցել Փոքր Ասիայի ափը առանց ռմբակոծութեան ենթարկվելու և կորստի։ Երկու օր շարունակ գործում էին սուզանաւերը Մարմարա ծովում։ Օգոստոսի կէսերին, թղթակցի ասելով, անսպասելի կերպով Դոլմա-Բախչէի պալատի մօտ և Եըլդըզ-Քիօշկի մօտ թնդացին թնդանօթներ. դրանից յետոյ, Բոսֆորի նաւագծում, պալատների դիմաց, անակնկալ՝ ծովի երեսն ելան անգլիական 3 սուզանաւ և բոլորովին հանգիստ սկսեցին ուղիղ նշան բռնել Դոլմա Բախչէի և Եըլդըզ-Քիօշկի զինապահեստի դէմ։ Ռումբերը գործում էին շեշտակի աւերումներ, որովհետև լցված էին մեծ ուժի պայթուցիկ նիւթերով։ Թիւրքերն սկսեցին պատասխանել դաշտային թնդանօթներից, ափերից, և սուզանաւերի ու թնդանօթների միջև սկսվեց պատմութեան մէջ չեղած կռիւ։ Անգլիացիներին աջողվեց աւերել թիւրքական երկու թնդանօթ, և միայն նրանից յետոյ, երբ Ղալաթիայի ծածկված նաւահանգստից նետեցին խոշոր մի ռումբ, որը և պայթեց ծովի մէջ, սուզանաւերը ընկղմվեցին և հեռացան։ Հետևեալ օրը միևնոյն սուզանաւերը ռմբակոծեցին Կ. Պոլսի ծովափը, Սկիւտարի մթերքների պահեստատեղիները և զինանոցները։

◆ «Petit Parisien»-ը ճշգում է այն տեղեկութիւնը, թէ սուլթանը նորից հեռագրով օգնութիւն է խնդրել Գերմանիայից, յայտնելով որ թիւրքերը անկարող են երկար դիմանալ Գալիպօլի թերակղզում։

◆ «Веч. Вр.»-ին հեռագրում են, որ սուլթանը հեռացաւ Բոսֆորի պալատից և հրամայեց դուրս տանել այնտեղից բոլոր գոյքը։

◆ Կ. Պոլսում հացի սաստիկ պակասութիւն է զգացվում։ Հացը ծախվում է տոմսակներով։ Ազգաբնակութիւնը յուզված է և ամեն քայլափոխին անիծում է գերմանացիներին։

ՄԻ ԷՋ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

I

Թիւրքահայկական հարցը, որ 19-րդ դարի վերջին կիսում ամբողջապէս կլանում է մեր կուլտուրական կեանքի բեկորները՝ զբաղեցնելով հայ գիրն ու գրականութիւնը, շղթայելով հայ ինտելիգենցիային իր շուրջը, կենտրոնացնելով իր վրա հայ մասսայի ուշադրութիւնը, կղզիացած մի շարժում չէ ներկայացնում. նա խորապէս կապված լինելով թիւրքահայի իրաւազրկութեան, նրա անհատական ու սօցիալական կեանքի անապահովութեան հետ՝ միաժամանակ ներքին թելերով կապված է թիւրք կառավարութեան ներքին ու արտաքին քաղաքականութեան ու եւրոպական մեծ պետութիւնների քաղաքականութեան հետ Թիւրքիայում. եւրոպական պետութիւնների մէջ եղած տենդային մրցումը նետում է նրանց Թիւրքիայի թէ պետական ներքին կեանքի խորքը և թէ նրա սահմաններում ապրող հպատակ ժողովուրդների իրաւազրկութեան սահմանները. այդ մրցումը ստիպում է նրանց զբաղվել թէ Թիւրքիայի ընդհանուր պետական կեանքի խնդիրներով և թէ Թիւրքիայի հպատակ փոքրիկ ազգերի կրօնական, ազգային սօցիալական հարցերով։ Այդ պատճառով էլ թիւրքահայի խնդիրը ամենաբարդ ու կնճռոտ բնոյթն ունի. չի կարելի զբաղվել՝ օրինակ՝ 1894—6 թ.թ. կոտորածներով միմիայն սահմանափակվելով հայ ազատականների շարժումներով և թիւրք կառավարութեան քաղաքականութեամբ, անտես առնելով եւրոպական պետութիւնների դիրքը դէպի թիւրք կառավարութիւնն ու նրա քրիստոնեայ հպատակները. չի կարելի մինչև անգամ այնպիսի շարժման դէպքում, ինչպիսին հայ կաթոլիկների և բողոքականների հալածանքներն էին հայ-լուսաւորչական եկեղեցու կողմից, անտես առնել, ինչպէս թիւրք պետութեան քաղաքական դիրքը այդ կրօնական շարժման ժամանակ, այնպէս էլ եւրոպական պետութիւնների քաղաքական դիրքը Թիւրքիայում։

Եւրոպական դիպլոմատիայի ազդեցութիւնը Թիւրքիայում՝ միայն նրանց սուլթանին ներկայացրած վերջնագրերում չէ արտայայտվում. դա նրանց ազդեցութեան արտայայտութեան ակնյայտ կողմն էր միայն. Նա այնքան խորն էր արմատացել Թիւրքիայի ներքին կեանքում, այնքան բազմազան կերպով էր ազդում թէ Թիւրքիայի պետական կեանքի և թէ նրա հպատակ ժողովուրդների կեանքի վրա, որ չի կարելի մատնանշել որևէ պետական ակտ կամ թէ ժողովրդական շարժման վրա, որ նա այսպէս թէ այնպէս կապված չը լինի պետութիւնների և Թիւրքիայի միջև եղած քաղաքական կօնիւկտուրայի հետ. առաւել ևս թիւրքահայ խնդիրը, որ հազարաւոր ներքին թելերով շղթայված է այդ կօնիւկտուրայի հետ։

Թիւրք պետութեան ներքին կեանքը այնպէս էր ենթարկվել պետութիւնների քաղաքականութեան, որ երկրում առաջացած թիւրքական քաղաքական կուսակցութիւններն անգամ հանդէս էին գալիս որպէս անգլիասէրներ կամ ռուսասէրներ, գերմանասէրներ կամ անգլո-ռուսասէրներ և ընդհակառակը. նայած միջազգային քաղաքականութեան կօնիւկտուրային, այդ կուսակցութիւններն ընկնում էին կամ բարձրանում։ Նոյնը նկատելի է և Թիւրքիայի հպատակ ժողովուրդների, ինչպէս և թիւրքահայերի կեանքում։ Զարմանալի կերպով թէ թիւրք սահմանադրականները, թէ հայ սահմանադրականները և թէ բուլղար սահմանադրականները Թիւրքիայում, բոլորն էլ անգլոֆիլներ էին, իսկ հակասահմանադրականները ռուսոֆիլներ էին։ Միտհադ փաշան (1876 թ.) Ռաշիդ փաշայի հետ (1839 թ.) անգլօֆիլներ էին և գտնվում էին ժամանակի անգլիական ուժեղ ազդեցութեան տակ. նրանց անգլոսիրութիւնը մինչև անգամ արտայայտվում է նրանց կազմած՝ սուլթանի գահական ճառի մէջ, որի մէջ սուլթանը խօսում էր Թիւրքիայի արտաքին և ներքին քաղաքականութեան մասին. 1839 թ. Թանզիմաթի (բարեկարգութեան) (խաթթը շէրիֆ գիւլհանէ) հեղինակ Ռաշիդ փաշան անգլիական կրթութեամբ և անգլիական խորհուրդներով շարժվող պետական գործիչ էր, որով ուզում էր թուլացնել ռուսական խոշոր ազդեցութիւնը Թիւրքիայի քրիստոնեայ ժողովուրդների մէջ (գլխաւորապէս սլաւօնների), որոնց մէջ անջատման և ինքնուրոյնութեան ձգտումը չափազանց ուժեղացել էր. դա այն ժամանակ էր, երբ Ռուսաստանը ջարդ ու փշուր անելով 1828—29 թ.ին թիւրքական բանակները՝ մտաւ Ադրիանուպոլիս, ստիպելով սուլթանին խաղաղութիւն կնքել, և 15,000-անոց բանակ դրեց Կ. Պոլսի առաջ։

Այդ պատերազմին էր, որ Ռուսաստանի ճնշմամբ սուլթանը յունական թագաւորութեան անկախութիւն շնորհեց, իսկ սերբիական իշխան Միլօշին էլ ժառանգական իշխան կարգեց Բելգրադի շրջակայքի վրա. այդ նոյն թւականին (1829 թ.) կնքված դաշնագրի համաձայն, սուլթանը խոստանում էր օտար պետութիւնների նաւերի մուտքը անարգել համարել ջրերում. այդ ժամանակ էր, որ յունական ապստամբութիւնը ճնշող Եգիպտոսի Մեհմէդ-Ալի փաշան, Ֆրանսիայի օգնութեամբ, որի ազդեցութիւնը չափազանց մեծ էր Եգիպտոսում, ապստամբեց սուլթան Մահմուդի դէմ. սուլթանի պաշտպանողը Ռուսաստանն էր. վերջինս իր վրա վերցրեց Կ. Պոլսի պաշտպանութիւնը իր 15,000-անոց բանակով։ Ռուսաստանը ի վարձատրութիւն դրան 1833 թ.ին Հիւնքեար-Իսկէլէսիի դաշնագրով իր պաշտպանութեան տակ է առնում սուլթանին, որի փոխարէն սուլթանը, արգելելով միւս պետութիւնների նաւատորմիղին, իրաւունք է տալիս ռուսական պատերազմական նաւատորմիղին միայն ջրերում լողալու ազատ։ Այդ դաշնադրութեան լուրը,—ասում է Տատիշչեվը,—ճայթեց անամպ երկնքից Եւրոպայի գլխին՝ որպէս մի ամպրոպ։ Այսպիսի մի խոշոր յաղթութեամբ էր որ Ռուսաստանի հմայքը տարածվեց Թիւրքիայի քրիստոնեայ ժողովուրդների մէջ։ Այդ պարագային էր որ Ֆրանսիայում և Աւստրիայում (այն ժամանակվայ Գերմանիայում) ծագեցին ներքին շարժումներ, որոնք մինչև 50-ական թւականները աչքաթող էին արել Արևելքը։ Այսպիսի քաղաքական կօնիւկտուրայից մեծապէս օգտվեց Անգլիան, որը շատ մեծ խիզախութեամբ ջանում էր թուլացնել ռուսական ազդեցութիւնը սուլթանների երկրում։

Ալ. Մել.-Ազաջ.

Մոսկվա

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

31 օգոստոսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ռիգայի, Ֆրիդրիխշտադտի և Եակոբշտադտի շրջաններում էական փոփոխութիւններ չը կան։

Եկաուից դէպի հարաւ և Միտաւայից դէպի հիւսիս-արևմուտք ընդհարումներ են մանր զօրախմբերի միջև։ Թնդանօթաձգութիւնը բաւականին սաստկացաւ Լինդէնի շրջանում՝ Ֆրիդրիխշտադտից դէպի հիւսիս-արևմուտք 20 վերստ հեռու։

Եակոբշտադտից դէպի արևմուտք յամառ կռիւները Պիկստերն և Սաուկէն լճերի շրջաններում շարունակվում են։

Դվինսկից դէպի արևմուտք ու դէպի հարաւ-արևմուտք թշնամին եռանդով առաջանում է. Աբէլի, Ուցեանի շրջաններում կռիւները շարունակվում են մեծ յամառութեամբ։ Նովօ-Սվենցեանի կայարանում թշնամին խզել է երկաթուղային հաղորդակցութիւնը։ Նովօ - Սվենցեանի և Վիլնայի միջև թշնամին ձեռնարկել է վճռական առաջխաղացման, որի պատճառով մեր զօրքերը ետ քաշվեցին դէպի Պօդբրոձէ երկաթուղային կայարանի շրջանը։

Վիլնայից դէպի արևմուտք և ապա դէպի արևելք մինչև Օրանի շրջանը փոփոխութիւն չը կայ. Օրանի-Մոստ զօրաճակատում յամառ կռիւ է բաւականին ուժեղացած հակառակորդի հետ Սկիդէլի շրջանում և դէպի արևելք։ Թշնամին զարգացնում է իր առաջխաղացումը Սկիդէլից դէպի արևելք։ Հակառակորդի հետ վերջապահ կռիւներ վարելով, մեր թնդանօթաձիգ վաշտերը կարողացան ուժեղ կրակ զարգացնել։ Վոլկովսկ-Կարտուզսկայա Բերէզա ճանապարհների վրա թշնամին զգուշութեամբ առաջացաւ։ Նրա փորձերը՝ դիմելու աւելի վճռական առաջխաղացման՝ հանդիպեցին ամենուրեք դիմադրութեան և ոչնչով չանդրադարձան մեր զօրքերի մասնակի նահանջի վրա, որ որոշված էր սկզբից։

Կոբրինի և Պինսկի միջև ընդհանուր առմամբ փոփոխութիւն չը կայ. Դրոգոչինից դէպի արևելք փոքրիկ ընդհարումներ են։

Սարնայից դէպի հարաւ-արևմուտք մեր զօրքերը շարունակում են դիմադրել հակառակորդին, որ ձգտում է առաջանալ Ստիրի և Գորինա գետերի երկարութեամբ և նրանցից դէպի արևելք։ Դէրաժնոյի շրջանում յամառ դիմադրական կռիւներ են։

Ռովնօյից դէպի արևմուտք՝ Դուբնօ-Կրեմենէցի շրջանում աւստրիացիք գործում են ապարդիւն յարձակումներ։

Գալիցիայում՝ Տարնոպոլի շրջանում մեր զօրքերը հակառակորդի «մրրկային» կրակի տակ դարձեալ մի փոքր առաջացան, ձեռք ձգելով գերիներ և գնդացիրներ։ Գերմանացիք այստեղ քաշվում են դէպի հիւսիս։

Ստորին Սերէտի մօտ՝ Զալէշչիկովի շրջանում հակառակորդը փորձեց առաջխաղացման դիմել և կանգնեցնել մեր առաջացումը դէպի արևմուտք, բայց յամառ կռւից յետոյ նորից ետ մղվեց։

Ընդհանուր առմամբ աւստրո-գերմանացիների գործողութիւններն ուղղված են շարունակել առաջխաղացումը, թէև շատ թանգ գնով։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

31 օգոստոսի

ՓԱՐԻԶ.—Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւն.

Արտուայում տեղի են ունենում, ինչպէս և առաջ, թնդանօթային կռիւներ, որոնք սաստիկ ուժեղ են Նէվիլի շրջանում։ Էնի գետից դէպի հիւսիս գերմանացիք ուժեղ ռմբակոծութեան ենթարկեցին բոլոր տեսակի թնդանօթներից Պէսսի-Լէգօզա սարահարթի միջև ընկած մեր դիրքերը։ Մեր թնդանօթաձիգ վաշտերը պատասխանում էին եռանդուն կրակով։ Շամպայնում, Մասայի և Մօզէլի միջև, Մօրմարտի անտառում, Լօթարինգիայի ռազմաճակատում, Նօմէնի, Գուսսէի շրջակայքում և Բանդէսապի շրջանում թնդանօթային կռիւներ են։

Երեկվայ պաշտօնական հաղորդագրութիւն.

Գիշերվայ ընթացքում տեղի ունեցան մի քանի կռիւներ ձեռքի ռումբերով Բէտիւն-Արրաս ճանապարհների վրա։ Սուշէի մօտ մենք հեշտութեամբ վանեցինք թշնամու յարձակումը։ Ցամաք ականային կռիւ տեղի ունեցաւ և շարունակվում է Սօմմից դէպի հարաւ՝ Ֆէյի առաջ։ Ուժեղ թնդանօթաձգութիւն է Արմանկուր և Բէվրէն շրջաններում, նաև Կրեննեվէրում և Նովրօնում։ Արգօններում և Շամպայնում ևս թնդանօթաձգութիւն է ընդմիջումներով։ Լօթարինգիայում մեր հրետանիները շեշտակի կրակ ուղղեցին գերմանական խրամատների դէմ։

ԼՕՆԴՕՆ.—Մամուլի բիւրօն յայտնում է. Անցեալ գիշեր «Ծէպպելինները» օդային արշաւանք կատարեցին դէպի արևելեան ծովափը և նետեցին ռումբեր, որոնք սակայն ոչ մի վնաս չը պատճառեցին։ Օգոստոսի 30-ին նմանապէս անգլիական ծովափը ենթարկվեց թշնամու աէրօպլանների ռմբակոծութեան. նիւթական վնասներն աննշան են։

ՀԱՒՐ.—Բելգիական պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է, որ զօրաճակատում աննշան թնդանօթաձգութիւն է։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

31 օգոստոսի

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Տիրօլ-տրէնտինեան շրջանում և Կարնիայում շարունակվում է թնդանօթային կռիւը, որ յաճախ դժուարանում է մառախուղներով. Թշնամին յամառութեամբ ռմբակոծում է մեր զօրաճակատից դուրս գտնվող բնակավայրերը։ Պլեցցօ գետի աւազանում թշնամու զօրքերը օգոստ. 28-ի գիշերով մթութեան մէջ փորձեցին անակնկալ յարձակում գործել Սլատինէկ հովտի դէմ։ Մեր զօրքերը հնարաւորութիւն տւին մօտենալ, յետոյ յարձակվեցին սւիններով և կատաղի կռւից յետոյ թշնամուն փախուստի դարձրին։ Տօլմինօ շրջանում մեր գործած յարձակումից յետոյ տեղեկութիւն ստացվեց թշնամու ուժեղ զօրամասերի առաջանալու մասին։

Մեր օդագնացներից երկուսը ռումբեր ձգեցին Օպպաչիօզելլէում թշնամու բանակի վրա։ Թշնամին բազմաթիւ ռումբերով ռմբակոծեց Մանֆալկօնէ աւազանը և վնաս պատճառեց մի քանի շոգենաւերի։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

31 օգոստոսի

ՍՏՕԿՀՕԼՄ.—Խրիստիանզանդից հաղորդում են, որ գերմանական մի սուզանաւ օգ. 28-ին Լինդէսնէսի մօտ հրդեհեց նորվէգիական «Պրէստօ» բեռնակիր նաւը։ Նաւաստիները ազատված են։

Օգոստոսի 30-ին գերմանական մի սուզանաւ նորվէգիական ջրերում բռնեց «Բէլջէյմ» շոգենաւին։ Նաւապետի տուած բացատրութիւնից յետոյ, նաւին թոյլատրվեց ճանապարհը շարունակել։

ԼՕՆԴՕՆ.—Հաղորդում են, որ «Էշմօր» շոգենաւը ջրասուզվել է. պակասում են 4 նաւաստի։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

31 օգոստոսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ֆինանսների մինիստրի անունով տրված հրամանի համաձայն, բաց են թողնվելու պետական գանձատան կարճաժամանակեայ պարտաթղթեր 1,100 միլիօն րուբլի գումարի։

Պետական Դումայի աւագագոյն անդամների խորհուրդը ցանկալի գտաւ հաստատել «ոսկու» կօմիտէտ Դումայի անդամներից՝ ընդունելու համար ոսկէ իրեր այն անձերից, որոնք կամենում են աջակցել պետական գանձատանը։

Ներքին գործերի մինիստրը Պետ. Դումային օրինագիծ ներկայացրեց՝ յատկացնելու հակաժանտախտային ձեռնարկութիւնների համար 9 միլիօն րուբլի։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը տեղեկացրեց ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին, որ առևտրական ու բժշկական դպրոցների աւարտողները կարող են համարվել համալսարանների ունկնդիրների թւում, երբ ուսանողների ընդունելութիւնից յետոյ կը լինեն ազատ տեղեր և պայմանով, եթէ նրանք ազատ են զինւորական ծառայութիւնից։ Նրանք ուսանողներ կարող են դառնալ տղայոց գիմնազիաների դասընթացքը բռնելուց յետոյ։

Ի նկատի ունենալով Կարմիր Խաչի միջազգային կօմիտէտի միջնորդութիւնը, Գերագոյն Զօրահրամանատարի շտաբը իրաւունք արեց կովկասեան զօրքի ընդհանուր հրամանատարին, որ օսմանեան Կարմիր Մահիկը պէտք է պաշտպանել Կարմիր Խաչի հետ համահաւասար։

ՍՕՖԻԱ.—Զինւորական մինիստրը հրամայեց ծառայութեան կոչել մակեդոնական լեգէոնի անդամներին և Մակեդոնիայում կամ Թրակիայում ծնված բոլոր բուլղարներին՝ 20—40 տարեկաններին։ Այդ զօրքերը 15-օրեայ վարժութիւններից յետոյ կը կազմեն մակեդոնական դիվիզիա։

ԼՕՆԴՕՆ.—Վաշինգտոնից հաղորդում են, որ պաշտօնական շրջաններում գերմանական դեսպան Բէրնսդօրֆի դէմ սկսված յուզմունքը նորից սաստկացել է այն տեղեկութեան հրատարակութիւնից, որի մէջ Բէրնսդօրֆը յայտնում է, որ եթէ նրան յանձնեն իր անցագրերը, այն ժամանակ Գերմանիան կը պատուիրագրէ իր սուզանաւերին յարձակում գործել բոլոր հանդիպող ճանապարհորդական շոգենաւերի վրա, որը և անխուսափելիօրէն պատերազմ կը յարուցանէ Գերմանիայի և Միացեալ Պետութիւնների միջև։

ՆԻՒ-ԵՕՐԿ.—Գերմանական դեսպան Բէրնսդօրֆը կիրակի օրը մեկնեց Վաշինգտոն։ Կարծում են, որ նա մտադիր է անձամբ բացատրութիւն տալ Լանսինգին իր յայտարարութեան առիթով։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Մինսկում ուսումնական զբաղմունքները յետաձգվել են. Ռիգայում էլեքտրաքարշը կանգ է առել, Կիեվից հաստատութիւնների փոխադրութիւնը շարունակվում է։ Ռովնօն դատարկվել է ազգաբնակութիւնից։ Ժիտոմիրում հաստատվել է ժողովրդական միլիցիա։ Կիեվի համալսարանը փոխադրվում է Նովօչերկասկ, իսկ նահանգական դատարանը՝ Տագանրոգ։

◆ «Րէչ»-ի ասելով, Գալիցիայում մեր տարած վերջին յաղթութիւնը ստիպելու է թշնամուն հրաժարվել Պոդոլի և Վօլինի վրա արշաւելու մտքից։ Վիլնայի շրջանում թշնամին շատ ամրացել է և հաւանօրէն շարունակելու է իր արշաւանքը։

◆ Անգլիացի տրէդ-ունիօնիստների ներկայացուցիչների համագումարը որոշեց, որ ամեն մի անգլիացի յօժարակամ կը մտնէ զօրքի մէջ հայրենիքի պաշտպանութեան համար, բայց յանցանք են գործում ռէակցիօն լրագիրները, որոնք պահանջում են պարտադիր զինւորական ծառայութիւն։ Համագումարը ի միջի այլոց բանաձևի մէջ մատնանշում է, որ հրէաներին պէտք է տրվեն իրաւունքներ այն երկրներում, ուր նրանք տակաւին իրաւազուրկ են։

◆ Ժընէվից հաղորդում են, թէ Վենիզէլօսին աջողվել է համաձայնութիւն կայացնել տալ Յունաստանի, Սերբիայի, Ռումինիայի և Բուլգարիայի կառավարութիւնների միջև Սալօնիկում կօնֆերենցիա գումարելու վերաբերութեամբ։

◆ Աւստրիական զօրքերը մօտենում են ռումինական սահմանին։ Ռումինական մամուլը յուզված է այդ առիթով և պահանջում է պատերազմ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Ստացել ենք 1) Ալուպկայից, Յակոբ Յովնանեանի միջոցով, տեղ. հայ գաղութի մէջ հանգանակված, ուղարկելի Վեհ. Կաթողիկոսին, 142 ր., 2) Բաժեցկից, Ն. Թառումեանից 20 ր., 3) Սուխումից, բժ. Մ. Զարգարեանից 10 ր., 4) Թիֆլիսում, օր. Ն. Ս.-ի միջոցով, տիրուհի Մարթա Տէր-Գրիգորեանից, որբերի համար 10 ր., 5) Ստարօբելսկից, Սրապիօն Յունանեանից 10 ր., 6) Ղազվինից, Եղիա Տէր-Յակոբեանի միջոցով, հանգանակված տեղում, ուղ. Էջմիածնի Կենտրօնական Յանձնաժողովին, 250 ր., 7) Սղնախից, Գիւլամբար Սարգսեանցի միջոցով, հաւաքված Արտէմ Սաղինեանցի դասեր հարսանիքին 13 ր. 40 կ., 8) Թիֆլիսում, լուսանկարիչ Սմբատեանից, յանձնելի Նպաստ. Ընկ. յօգուտ որբերի, 5 ր., 9) Գրօզնիից, Պ. Մ. Մահտեսեանից 15 ր., 10) Ղզլ-Արվատից, Խ. Բաղդասարեանից, իր հանգուցեալ մօր քառասունքի յիշատակին, 15 ր., 11) Ներքին-Ախտայից, Ս. Եսայեանցի միջոցով, Գաբրիէլ Մուրադեանից 10 ր., 12) Բաթումից, Գէորգ Կէօվճեանի միջոցով հաւաքված տեղում, յանձնելի Վեհ. Կաթողիկոսին, 44 ր., 13) Տաշ-Հաւուզից, Յովհաննէս Սաֆարեանի միջոցով հաւաքված տեղում, յանձնելի Էջմիածնի Յանձնաժողովին, 34 րուբլի, 14) Վերին-Ագդանից, Շաւրիկ Մէլիքսեդէկեանից 5 ր., յանձնելի Նպաստամատոյց Ընկերութեան 15) Կարսից, Վ. Տէվկանցից 20 ր., 16) Կարսից, Վ. Տէվկանցից, յօգուտ որբերի, յանձնելի Նպաստ. Ընկ., 20 ր., 17) Թիֆլիսում, Բաբիէվսկիից 3 ր., 18) Թիֆլիսում, Ալէք. Ն. Միլեանից, Սարգիս Ա. Միլեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն, 30 ր., 19) Կիեվից, Ի. Ն. Շուլմանից, պրօֆէսոր Ս. Ա. Եղիազարեանի պրօֆէսօրական 30-ամեայ գործունէութեան յաւերժացման 500 ր. (տես Նամակ «Մշակ» № 190)։ Գումարն է 1156 ր. 40 կոպէկ։ Նախորդ ստացված 52,293 ր. 87 կ. գումարի հետ միասին (տես «Մշակ» № 192) ստացել ենք ընդամենը 53,450 ր. 27 կ.։

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

Ստացանք Սուխումից, բժ. Մ. Զարգարեանից 10 ր.։ Նախորդ ստացված 45,735 62 կ. գումարի հետ միասին (տես «Մշակ» № 191) ստացել ենք 45,745 ր. 62 կ.։

ՅՕԳՈՒՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻ

Ստացանք Կարսից, Վ. Տէվկանցից 10 ր.։ Նախորդ ստացված 412 ր. 1 կ. գումարի հետ միասին (տես «Մշակ» № 179) ստացել ենք 422 ր. 1 կ.։

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք՝ 1) Սարատովից, Աւագ Հախվերդեանից—10 ր., 2) Գրիգորիօպոլից, Ցար. ք. Տէր-Ենօքեանից—5 ր., 3) Զիլիլից, տեղական հայ հասարակութիւնից—56 ր., 4) Սկօբելևից, Զ. Սուլխանեանից—5 ր., 5) Նովօրօսիյսկից, եղբ. Քասիեաններից, Եր. Ց. Խաչիկեանից և Մարիամեանից—6 րուբլի։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Ալեքսանդրապոլից 3 բժիշկ և մի քանի ֆելդշեր ու գթութեան քոյրեր գնացել են Էջմիածին։

Ջուլֆայից Հ. Բ. Ընկերութիւնը ստացել է Ներսէս եպիսկոպոսից հետևեալ հեռագիրը, օգոստոսի 30-ից.

Դիմեցի Կարմիր Խաչի ընկ. և Քաղաքների Միութեան 3000 հոգու համար սննդատու կայան բանալու։ Վաննեցիների մէջ մահացութիւնը հասնում է օրական 60—80 հոգու։ Խոլերան սպառնալից կերպարանք է ընդունում։

Երկուշաբթի օրը Էջմիածնից Թիֆլիսի Նաւթլուղի դասաւորող կայանը բերվեցին 400 որբ-փախստականներ. դրանց մէջ կար 60 հիւանդ, որոնց ուղարկեցին քաղաքային հիւանդանոցը։ Մնացած երեխաներին լողացրին, հագցրին մաքուր սպիտակեղէն և ուղարկեցին Օրթաճալա, յատուկ նրանց համար վարձած շէնքը։

Երևանում սկսել են հիւանդ փախստականների ընդունելութիւնն նոր բացված հիւանդանոցում։ Սննդակայաններն այնտեղ, ինչպէս հաղորդում են, արդէն գործում են։

Քաղաքների Միութիւնը Էջմիածին ուղարկեց իր կազմակերպած սանիտարական երկրորդ խումբը։

Երևան, 20 օգոստ.

Վերջապէս օր ըստ օրէ դադարում է թշուառ հայաստանցիների այն սոսկալի գաղթը, որ ծայր էր առել Էջմիածնից Երևան։ Չէ կարելի տեսնել և չը սոսկալ այն անմխիթար և սառն վերաբերմունքից, որ ցոյց է տալիս Երևանի հասարակութիւնը ներկայ պատմական ծանր օրերին։ Անցնում ես Երևանի այգիներով ու ցնցվում. ակամայից մի սարսուռ է անցնում երակներովդ։ Պատերի մօտ, արևի կիզիչ ճառագայթների տակ, թաւալված՝ աղբի ու փոշու մէջ, երևում են մարդկային գլուխներ յօգնած, վհատ, մեռնող հայեացքներով։ Եղբայրական օգնութեան մի կանչ է նրանց լացն ու կոծը... «Փշուր մը հացի» անդադար պահանջ։

Անցնում էք քաղաք. չը կայ այլևս այն սրտացաւ վերաբերմունքը դէպի թիւրքահայ գաղթականութիւնը, ինչ որ նկատելի էր առաջին օրերին. կարծէք թէ արդէն իսկ բաւարարված լինենք՝ նրանց խեղճութիւնը տեսնելով։

Շահագործողների լեգէոնն օր ըստ օրէ աւելանում է, մի երևոյթ, որի վրա ենք հրաւիրում գաղթականութեանն օգնող մարմինների ուշադրութիւնը։ Թալանվածներին կրկին թալանե՞լ. էլ աւելի մեծ խայտառակութիւն կա՞յ արդեօք։ Պէտք է թողնել վերջապէս հարստանալու այդ զզուելի պրիօմները։

Եկեղեցիների բակերում, ուր կուտակված է գաղթականութեան մեծ բազմութիւն, հանդիպատես ենք սոսկալի տեսարանների՝ մերկութեան և կեղտոտութեան մէջ հիւանդ. այնքան շատ են սրանք ու անօգնական տառապում են մեր քոյրերն ու եղբայրները կողք-կողքի շարված մեռելային դիմագծերով... միայն աղիողորմ հառաչն ու մորմոքն է անցորդին մատնում նրանց թշուառ գոյութիւնը։ Մարդկային ուժից վեր է նկարագրել այն բոլորը, ինչ որ կատարվում է Երևանի գաղթականութեան հետ։

Եթէ առաջնորդարանի ու Երևանի ինտելիգենցիայի աչքի առաջ տիրում է ծայրայեղութեան հասած նման դատապարտելի անտարբերութիւն, ապա ինչ կը լինի վաղը այդ գաղթականների դրութիւնը գաւառներում, ուր արդէն սկսել են ուղարկել նրանց։

Անցնում ես Աստաֆեան փողոցից վեր, ուր այգիներում ու փողոցի մայթերի վրա խռնվում է նոյն ժողովուրդը խեղճ ու անմխիթար։ Միշտ հառաչանք ու լաց... «Մանր մարդիկ» մի կտոր հացով շատ համեղ պատառ են ստանում այս անկիւններում. մէկից գնում են թիւրքական արծաթը ամենաէժան գնով, միւսից զանազան հագուստեղէններ։ Մենք զարմացել էինք Վանի 30-օրեայ ապստամբութեանը հետեւող թալանի վրա, բայց չենք տեսնում մեր աչքերի առաջ՝ մեր ձեռքով մեր եղբայրներին ու քոյրերին թալանելը։

Ցար. Մարգարեան

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅ ՀԱՐՈՒՍՏՆԵՐՈՒՆ

Որքան ալ քաղաքներու ազնուական անկիւնները, գեղեցիկ պարտէզներու խորը թաղուած ըլլան ձեր ապարանքները, որքան ալ ձենէ շատեր թաղուած ըլլան եսին ու նիւթին այլամերժ հոգերուն մէջ, անկարելի է որ ձեր պճնազարդ սալօններու թաւշապատ ճոխութեանց մէջ չթափանցէ հայ տառապանքին սրտակեղեք հեծանքը, անկարելի է, որ մինչև ձեր ամրափակ գրամարկղներուն եւ սիրտերուն խորը չարձագանգէ եղբայրական օգնութեան աղաղակը հոգեցունց։ Դուք հարկաւ, ձեր կարգին, բաւական յստակօրէն կը կարդաք օրուան թերթերը և գիտէք, թէ մեր ազգը իր գերագոյն ճիգը կը փորձէ այս պահուս, իր ճակատագիրը իր ձեռքովը իսկ շինելու անտեղիտալի վճռականութեամբ կը գործէ։

։ Բայց այս վեհ նուիրաբերումի զմայլելի պատկերին քով կը պարզուի ուրիշ աղեխարշ պատկեր մըն ալ, զոր կարելի չէ որ ցերեկները կարենաք աչքի առջև բերել առանց արցունքի և որ անտարակոյս գիշերները սև մղձաւանջներու պէս կը յաճախեն ձեր անհանդարտ խղճմտանքները։ Այդ պատկերը բառ չունի. հոն արիւն և աւեր կայ միայն, որբեր և հիւանդներ միայն որ՝ աշխարհիս ամենէն դաժան տանջանքներովը կը տուայտին, այրիներ և ծերեր՝ զոր սուրը և սովը կը դատապարտէ ողջ-մեռելութեան անորակելի ականքներուն. հոն կան շարան շարան կախաղաններ, հոն կայ կոտորածի յաւերժական արհաւիրքը և բոլոր թշուառութիւնները համատարած ու համահալած՝

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՍՄԱՆ ԲԱԲԱ

I

Ալլահի և մեծ մարգարէ Մուհամմէդի շնորհքը անպակաս էին Օսման Բաբայի վրայից։

Ապրում էր նա առատութեան մէջ. ոչինչ չէր պակասում նրան, անթիւ ծառաներով էր շրջապատված նա։

Չը կար երկրի վրա նրա նման զօրեղ։ Նրա հրամանը Ալլահի պատգամն էր, մի խօսքը՝ օրէնք։

Երջանիկ էր նա այս աշխարհում, իսկ հանդերձեալում սպասում էր նրան ջէննաթի վայելչութիւնները... հուրի-մելէքներով։

Օրհնեալ լինի Ալլահի անունը. այդ բոլորը նրա ջերմեռանդութեան վարձն էր։ Բարեպաշտ մուսուլման էր Օսման Բաբան։ Շարիաթի ամեն մի տառը սրբութեամբ կատարող։ Օրական հինգ անգամ լուացվում էր նա, հինգ անգամ նամազ կատարում. իսկ թէ քանի անգամ էր Մէկկա ուխտի գնացել, որքան զոհեր մատուցել, քանի անգամ Զէմզէմի նուիրական ջրից խմել, այդ մասին նոյնիսկ նա մոռացել էլ էր։

Իր հաւատակիցների բոլորի վշտին վշտակից էր նա. օրական քանի ժամ նա լսում էր նրանց տանջանքները և ամենքի ցաւին դարման անում։

Իմաստուն էր հաջի Օսման Բաբան և արդարադատ։ Իսկ հաւատացեալ ժողովուրդը գոհ էր նրանից այնքան, որ աւելին չէր էլ կամենում։

II

Մի առաւօտ ներս ընկաւ նրա մօտ մամօրթ Կասըմը։

— Ով իմաստուններից իմաստուն. ես մի անբաղդ հայր եմ. Ի՞նչ անեմ, ինչով մխիթարվեմ, ինչ քարը տամ գլխիս։ Իմ միակ որդիս, եղնիկի նման գեղեցիկ պատանի Զէյնալս, Չըհօրից ջուր հանելիս, սայթաքվեց և գլորվելով Չըհօրի մէջ խեղդվեց։

— Եթէ նա գեղեցիկ էր այնքան, ինչպէս դու ես ասում, ապա անշուշտ նրան աչքով են տւել,—ասաց Օսման Բաբան և մտքի գնալուց յետոյ հարցրեց.—Այսօր մի օրէ մուռտառ քրիստոնէի հետ գործ չե՞ս ունեցել։

— Այո, առաւօտս մի հայի միս ծախեցի,—պատասխանեց Կասըմը։

— Տեսնում ես, հէնց այդ շէյթանն է եղել քո դժբաղդութեան պատճառը։

Կասըմը ապշած մնաց։

— Բայց նա իմ ամենօրեայ գնորդն է, տէր, ես նրան մի շատ բարի մարդ եմ կարծել։ Ալլահ, Ալլահ. անէծք այդ անհաւատի գլխին։

— Գնա՛ ուրեմն մեր հաւատակիցներից խումբ կազմիր, յարձակվիր այդ անօրէնների վրա և տասն հատ գեղեցիկ մանչեր փախցրու։ Ցետոյ թլփատիր նրանց ամենքին և մեր ուղղափառ հաւատին բեր։ Այդ բարի գործի համար հանդերձեալում քո վարձը կը լինի ջէննէթ, իսկ այս աշխարհում մի Զէյնալի փոխարէն դու կունենաս տասը։

Կասըմը գնաց և կատարեց Օսման Բաբայի վճիռը։

III

— Հաջի Օսման Բաբա, ես մի անբաղդ մուսուլման եմ,—մի օր ներս գալով նրա մօտ, ասաց Չէկէր Բէշիրը։

— Մի համարիր քեզ անբաղդ, ով մարդ, քանի որ հաճոյ է եղել Ալլահին և նրա մեծ մարգարէին, որ դու իբր մուսուլման աշխարհ գաս։

— Բայց իմ ո՞ր մեղքիս համար նոյն Ալլահը պատժեց ինձ։

— Ի՞նչ է պատահել։

— Այս գիշեր այրվեց իմ ախոռատունը և նրա մէջ իմ ջորին։ Նա էր իմ օգնականը, նրանով էի ընտանիքս ու երեխաներս պահում։

— Իսկ երէկ առաւօտ քեզ անմաքուր գեավուրը չի պատահել։

— Ինչպէս չէ. վաճառական Մարտիրոսը երէկ առաւօտ, դեռ երեսիս սալավաթ չը քաշած, եկաւ և ըստ սովորականին ասաց ինձ. «Սաբահ շէրիֆլէրինիզ խայր օլսուն»։ (Առաւօտս կենսադավարութիւններով լաւ լինի)։

— Իսկ ինչ ասաց նրա սիրտը։

— Մեղայ Աստուծոյ, տէր. նա մի բարի մարդ է, մուսուլմանների մէջ անգամ հատը չը կայ։ Դեռ այսօր էլ նա եկաւ ինձ մօտ և ասաց. «Այլակրօն եղբայր Բէշիր, մի ընկճվիր. Աստուած մեծ է և ողորմած. առ քեզ մի քանի ոսկի, գնա շուկա, գնիր քեզ համար մի նոր աւելի լաւ ջորի։ Իսկ իմ պարտքիս մասին բնաւ մի հոգար. եթէ կարող ես՝ քիչ-քիչ կը վճարես, իսկ եթէ ոչ՝ էլ ո՞ր օրվայ հարեաններ ենք»։

— Դու ասում ես՝ նա բարի մարդ է, քան շատ մուսուլմաններ։ Ուրեմն գնա, հոգամ, որ նրա հոգին փրկես ջհաննամի կրակից։ Գնա՛ ստիպիր նրան իսլամը ընդունել։

— Բայց նա այդ չի անիլ։

— Չի անի։ Դէ գնա, ա՛ռ սուրդ, զարկ, փշրի՛ր նրա գլուխը, որովհետև, ճշմարիտն ասում եմ քեզ, նրա մէջ շէյթանն է բուն դրել։ Գնա, տիրացի՛ր նրա բոլոր ինչքին և փոխանակ մէկ ջորու՝ գնի՛ր տասն և մէկ ջորի։

— Իսկ Ալլահն ինձ չի պատժի։

— Պարզամիտ մարդ, բարի գործի համար ինչու պիտի պատժվի մուսուլմանը, երբ ասված է, թէ գեավուրի ինչքը սուրբ է ուղղափառին։

Բէշիրը խոնարհ գլուխ տւեց և գնաց, կատարեց հաջի Օսման Բաբայի հրամանը։

IV

Մի առաւօտ Օսման Բաբայի մօտ եկաւ արիւնաթաթախ, գլտված, գզգզված՝ պատկառելի հասակով մի մարդ։ Նա առանց մի բան ասելու փռվեց նրա ոտքերի տակ։ Նա իր շարժումներով ցոյց տւեց նրան, որ իրան ծեծել են, ունեցած-չունեցածը կողոպտել, երկու գեղանի աղջիկը առևանգել, պառաւներին սրի քաշել, եղբօրը մորթել, իսկ իրան խղճալով՝ միայն լեզուն են կտրել, որ այդ մասին ոչինչ չը կարողանայ խօսել։

— Ով խեղճ մարդ, ով ողորմելի մարդ. սա ինչ սոսկալի գազանների ձեռք ես ընկել։ Արդեօք գրել գիտե՞ս։

— Թող օրհնեալ լինի Ալլահի անունը,—շարժումներով հասկացրեց մարդը,—որ երկրումս եմ ապրում, որ ուսում էլ չունենայի։

— Թշուառ մարդ, գրիր տեսնեմ ինչ ես կամենում ասել։

Գանգատաւորը գրեց ամեն ինչ։ Աշխարհի վրա անգթութիւն չէր մնացել, որ նրա գլխին բերած չը լինէր ծուռ-քէթ Համիդբէյը։

Երբ հաջի Օսման Բաբան բոլոր նրա գրածը կարդաց, արիւնը գլխին խփեց, մի րոպէ նա սոսկաց, յետոյ ահեղ ձայնով կանչեց.

— Մուստաֆա...

Իսկոյն, որտեղից որ էր, վազելով եկաւ և տիրոջ առաջ չոքեց ներքինապետ Մուստաֆան։

— Այս րոպէիս, որտեղ որ է, այստեղ քարշ տւէք այն օձագործ ծուռ-քէթ Համիդին։

Չանցաւ 10 րոպէ իսկ, զափթիաները ներս բերին Համիդին. նրանց հետևեցին տասից աւելի ուրիշներ։

— Անգութ, անողորմ շուն, այդ ինչ ես բերել դու այդ թշուառ ադամորդու գլխին...

Յանկարծ Համիդը, որ մինչ այդ սապատողի նման մէջքից կորացած էր, ուղղվեց և համարձակ կերպով կանչեց.

— Միթէ ես այնքան ստոր եմ ընկել քո աչքին, Օսման Բաբա, որ այդ գեավուրի ներկայութեամբ թոյլ տայիր քո հաւատակցին շուն կոչելու։

— Գեավո՞ւր ասում ես դու. ուրեմն սա մեզ նման մի մուսուլմա՞ն չէ։

— Ինչպէ՞ս կը բարձրանար իմ ձեռքը մի մուսուլմանի վրա։ Եւ ո՞ր մուսուլմանը թոյլ կը տար իրան անարգել մեր սուրբ կրօնը, մեր լոյս հաւատը։

— Հէ՞,—կատաղած և փրփուրը բերանը կոխած, ձայն տւեց Օսման Բաբան.—սա անարգել է մեր կրօ՞նը։

— Ահա, հարցրէ՛ք սրանց։ Այդ ասելով Համիդը ցոյց տւեց այն մարդկանց վրա, որ եկել էին նրա հետ։ Իսկ նրանք օձիքները պատռելով և կուրծք ծեծելով կանչեցին.

— Ալլահ էքբէր, ջհաթ, ջհաթ, պատժի՛ր այդ մուռտառ քրիստոնէին, որովհետև նա մեր հաւատը յիշոց տւաւ։

— Անմարդ, անհաւատ շուն, ինչպէ՞ս յանդգնեցիր,—դառնալով գանգատաւորին աղաղակեց հաջի Օսման Բաբան։—Էլ ինչո՞ւ էք խնայել նրա կեանքը։ Տարէք իսկոյն կապեցէք նրա պարանոցից մի մեծ քար և բաց թողէք ծովի յատակը՝ ձկներին կերակուր լինելու։

Գանգատաւորին ծեծելով դուրս տարան։

Ուղղափառներն օրհնեցին Ալլահի անունը և հազար շնորհակալ եղան Օսման Բաբայից, որ նա իր իմաստուն դատաստանով խաղաղեցրեց նրանց արդար զայրոյթը և վրդով հոգիքը։

— Մատուցէք պատուելի հիւրերին ղահվէ և նարգիլէ,—հրամայեց Օսման Բաբան։

Նրա հրամանը կատարվեց ճշդութեամբ։

Ալ. Աբէլեան

(Վերջը միւս անգամ)

զոր պատմութիւնը տակաւին չէր արձանագրած և զոր և ոչ մէկ երևակայութիւն կրցած էր մինչև այսօր մակաբերել իսկ:

Դուք, ով ազգին մեծատունները, դուք այս ամենը շատ լաւ գիտնալու էք, մինչ աւելի լաւ գիտէք անշուշտ, որովհետև կարելի չէ, որ դուք ալ պատերազմի մէջ չըլլաք, գոնէ ձեր խիղճերուն հետ, ինչպէս մենք, ազգին յետինները, պատերազմի մէջ ենք մեր դահիճներուն հետ, ամենքս ալ տալով ինչ որ կրնանք և մենք շատերը յօժարակամ տալով մինչև իրենց վերջին կաթիլը:

Եւ սակայն ըսէք թէ դուք ինչ ըրիք, երբ լսեցիք ահազանգը...

Ի՞նչ ըրիք դուք սա վերջին մէկ տարուան ահաւոր շրջանին, երբ մեր հայրենիքը նորէն և աւելի քան երբեք վայրագօրէն թատր հանդիսացաւ անլուր խժդժութիւններու, երբ մեր սիրելի հատորները, ամեն տեսակ խոշտանգումներու ենթակայ, ձեր աչքերուն առջև այսպէս կը բզքտուէին ու կը խողխողուէին: Բոլոր զոհերուն և նահատակներուն անհաւասարելի զոհողութեանց փոխարէն դուք ինչ կերպով կատարեցիք ձեր պարտականութիւնը իբրև մարդ և իբրև հայ:

Դուք ոչինչ ըրիք, հայ հարուստներ, իսկապէս ոչինչ ըրիք: Ձեր ճոխափարթամ սեղաններէն աւելցած փշրանքները մենք համբերատար ոգիով ժողվեցինք միշտ այն յոյսով, թէ վաղը գոնէ ձեր կղպուած խըղճմտանքները և դրամարկղները լայն պիտի բանաք ազգին ծով կարօտութիւններուն առջև:

Այո, երբեմն, ու տակաւին վերջերս, ձենէ ոմանք, բարեհաճօրէն, ողորմութիւններ մը շնորհեցին այս կամ այն հանգանակութեան գանձանակին համար... և սակայն չգտնուեցաւ, աւաղ, միակ հայ մեծատուն մը, որ ճշմարիտ հայրենասիրութեան և ճշմարիտ առատաձեռնութեան գեղեցիկ ժեստ մը ընէր. չգտնուեցաւ ձեր մէջէն մէկը, որ ըսէր ազգին.— ահա ամբողջ հարըստութիւնս. ինչ կըսեմ, չգտնուեցաւ ոչ մէկ հայ հարուստ, որ ըսէր. «Ահա հարստութեանս մէկ կոտորակը, քառորդը, (կամ գոնէ) տասանորդը»: Այդքան մը վեհանձնութեան տէր միակ հարուստ մը չկա՞ր ուրեմն այս խեղճ ազգին մէջ, ու սակայն 10,000-նոցէն վեր հազարաւոր հարուստներ կը պահէ իր մայրենի գուրգուրոտ ծոցին մէջ: Խե՜ղճ մայր, դուն այսօր արիւն արցունք կուլաս, և սակայն քու լաւագոյն զաւակներդ կը խորթանան վերջին պահուն և քեզ այսպէս քու անողորմ բաղդիդ կը ձգեն: Վաղը քու նահատակ ու հերոս զաւակներուդ աւերակ հողերուն վրայ, գուցէ անոնք պիտի գան կանգնել պալատներ....: Ի՜նչ հառամ:

Չէ, այս տխուր, ամենատխուր կացութիւնը աւելի երկար պիտի չշարունակէ: Ազգը, իր գոյութեան վճռական կռիւին մէջ, չի կրնար այլ ևս աչք գոցել: Աղերսը պահանջ կըլլայ, պահանջը հրաման պիտի ըլլայ:

Չէ, բարեկամներ, այս անգամ ձենէ ուզուածը փողոցին անկիւնը սպասող աղքատին համար ողորմութիւն մը չէ: Մեծ պարտք մըն է, որ պիտի կատարէք, ճըշմարիտ տուրք մըն է, որ պէտք է հատուցանէք: Ուրիշներ իրենց կեանքը կուտան, շատ չէ որ դուք ալ ձեր դրամը տաք, ձեր հարստութեան մէկ մասը միայն, նուազագոյն մասը գոնէ: Ժամանակ է, որ ազգովին որդեգրուի «տասանորդի» դրութիւնը. հարուստները, որոշ դասակարգէ մը սկսելով, գոնէ անոնք զոր ներկայ պատերազմը ուժգնապէս չխախտեց, պէտք է ենթարկուին այդպիսի պատերազմական տուրքի մը: Կը բաւէ որքան ալ անտեսուեցաւ ժողովուրդի համեստ զաւակներուն դուռը, անոնք արդէն տուին և միշտ պիտի տան, բայց պէտք է որ այսուհետև ունեւորներն ալ իրենց հասարակական պարտքը կատարեն, որպէսզի արժանի ըլլան հայ անունին՝ զոր կը կրեն, ազգութեան՝ զոր իրենց փառքը կը նկատեն, և ազատութեան՝ որուն հեռապատկերը կը ժպտի իրենց սիրտին և քսակին հաւասարապէս:

Եւ երբեմն, մեր հարուստները, յաճախ իրաւացիօրէն, կառարկէին թէ որու վստահին իրենց դրամը, ինչ բանի համար տան: Հիմա ինչ է արդեօք իրենց առարկութիւնը. հիմա ալ, գիտեմ, իրենցմէ ոմանք կը համարձակին առարկել, թէ ինչպէս տան, քանի որ պառակտիչ պայքարներ կան, քանի որ համերաշխութիւն չի գոյանար... Կը բաւէ՜. քիչ մը խիղճ: Ժամավաճառ ըլլալու ատեն չունինք, և ոչ ալ սիրտ: Առասպելներու շրջանը անցած է. հիմա վտանգը կը խօսի ամեն տեղ և ազգեր իրենց ճգնաժամը կապրին: Վաղը շատ ուշ է:

Ուրեմն տուէք: Միթէ այդ մասին ամենադոյզն կասկածը ունիք ձեր սիրտերուն մէջ: Դուք շատ լաւ գիտէք թէ ձեր ձեռքերը որ ուղղութեամբ պիտի կարկառին, եթէ բանաք ձեր սիրտին դուռները: Ահա Ազգային Հիմնադրամի Հանգանակութիւնը, որ յատկացուած է ազգային փրկագործումին համար ամեն տեսակ կարիքներու, կամաւորներէն սկսելով մինչև յետին զոհը այս խուժդուժ պատերազմին, առանց այս կամ այն մասնաւորումի, առանց ոևէ խտրութեան կամ բացառութեան. դեռ ինչ կուզէք: Դուք շատ լաւ գիտէք թէ այդ Հանգանակութիւնը կուսակցական չէ, այլ բառին լայն առումովը համազգային է: Անիկա կը գտնուի ազգին սիրելի Հայրապետին՝ Վեհ. Կաթողիկոսի բարձր հովանաւորութեան ներքև. անոր գլուխը կանգնած է ամեն վստահութեան արժանի բացառիկ անձնաւորութիւն մը, վսեմ. Պօղոս Նուպար փաշա, որ ազգին պատուիրակն է և որուն ձեռնհասութիւնն ու ուղղամտութիւնը կասկածի տակ դնող չի գտնուիր բարեբաղդաբար ձեր շարքերուն մէջ: Ի՞նչ կուզէք աւելի. ի՞նչ փոյթ մնացեալը, որ ժամուն կը սպասէք:

Ես հոս տեղեր և անուններ չեմ մատնանշեր, ոչ ալ շատ ցանցառ և զովելի այս կամ այն բացառութիւնը. նպատակս ասոր կամ անոր դէմ ակնարկութիւն ընել չէ բնաւ.

Ստոյգ է որ ազգին ներկայ բաղդորոշ ըօպէին, հայ մեծատունը ինքզինքը ցոյց չտուաւ ընդունակ գեղեցիկ յուզմունքներու, չըրաւ ազնիւ քաղաքացիի վայել ճշմարիտ վեհանձնութիւն մը: Երբ Վեհ. Կաթողիկոսը աղերսաւ կոնդակներով ողողեց հայ աշխարհը, ոչ մէկ հարուստ ընդառաջ գնաց ծերունի Հայրապետի աղաչանքին: Երբ վսեմ. Պօղոս Նուպար փաշա, առաքելութեան ցուպը կըրկին առած, հայ դատին համար ճամբայ ինկաւ, ոչ մէկ հայ հարուստ լսեց իր կոչը այնպէս, ինչպէս կը վայելէր, ինչպէս ներկայ ժամը կը պահանջէր:

Ազգային Հիմնադրամը, որ ազգին գոյութեան և ազատութեան դրամագլուխը պիտի ըլլար, հինգ ամսուան միջոցին հազիւ քանի մը հազար ոսկիի ողորմելի գումարի մը յանգեցաւ: Վերջերս Հայկ. Ընդհ. Միութիւնը եւս «բարեգործական» ոչ մէկ կարեւոր նուիրատուութիւն արձանագրած է: Եւ սակայն քանի մը տասնեակ հարուստներ միայն ունինք, որոնց իւրաքանչիւրը առանց մոխիրի վրայ նստելու շատ դիւրաւ կրնար քանի մը տասնեակ հազար ոսկիներ ընծայաբերել ազգին և այդպիսով իր անունը յաղթականօրէն կոթողել ժողովուրդին սիրտին մէջ:

Մենք այլ ևս տուողներուն անունները չէ որ կուզենք իմանալ.

Վ. Մալէզեան

Կահիրէ

ՄԻՍԻՆՈՑՆ ՈՒՂԻՈՎ

Հուժկու հարուածը՝ որ կատաղի թափով իջնում է մեզ վրա. վայրագ օրհասը՝ որի քմահաճոյքներին ներկայումս ենթակայ ենք մենք, և այն մոլի ու հայաջինջ ծրագիրը՝ որի բիրտ հիւսուածքներում այժմ խճճվել ենք ազգովին,—ոչ միայն չունեն իրանց նմանը հանուր մարդկութեան պատմութեան մէջ, այլ և բացառիկ ու աննախընթաց երևոյթներ են մեր իսկ արիւնոտ պատմութեան մէջ.

Մեր անցեալ պատմութիւնը, որ, սկսած առասպելական Հայկից մինչև 1914—15 թւականները, մի ամբողջական հիւսուածք է, կազմված՝ աւարից ու կողոպուտից, տանջանքից ու կոտորածից, գաղթից ու հալածանքից, սարսափից ու արցունքից, արիւնից ու գերեզմանից, բարոյական ախտից ու վէրքից և այլն... դարձեալ նսեմ է այսօրվայ մեր իրականութեան մէջ կատարվող սարսռեցուցիչ անցքերի առաջ:

Խտրութիւն չի դրվում ոչ սեռի, ոչ տարիքի, ոչ դրութեան, ոչ դասակարգի, ոչ դաւանութեան և ոչ էլ գաղափարի պատկանողների մէջ...

Հալածվում, տանջվում, մորթոտվում են անխտիր ամենքը...

Քչերին է միայն աջողվում ազատվել մահվան ճանկերից. բայց նրանք դարձեալ մնում են չարչարանքի մէջ. ընդգրկում են գաղթի տանջալից ուղին և դիմում են յուսով... դէպի բաղդաւորութիւն, իսկ էապէս... դէպի անբաղդութիւն...

Սե՜ւ օրեր... Դաժան, ողբալի անցքեր... որ նորից մեզ՝ տանջվածներին գտաք, մեզ՝ հալածվածներիս փաթաթվեցիք:

Եւ այս սև օրերում անհրաժեշտ էր, որ իւրաքանչիւր ողջմիտ և զգացմունքներ ունեցող հայ մարդ բոլորվէր մի ընդհանուր և վսեմ աշխատանքի շուրջը՝ վանելու մեր գլխին իջնող հարուածը և ի չիք դարձնելու մեր կեանքի և գոյութեան խաղաղ զարգացման ճանապարհին սփռված դաւերն ու որոգայթները. նաև՝ պարզօրէն ասած՝ փրկելու մեզ եղեռնական մահից, արհաւիրքներով լեցուն փախուստից, վերահաս սովից, սարսափից...

Բայց ո՞վ է տուել հային... երանութիւն...

Ո՛չ Վասակն է բարեկամս, ոչ էլ Մեհրուժանն է ազգակիցս... Բայց ամեն անգամ, երբ նրանք նայում են ինձ մեր պատմութեան փշրված պատուհաններից, ուղիղն ասած՝ շփոթւում եմ, ամօթն սկսում է վառվել դէմքիս...

Այստեղ է ահա ասված. «Հայրերն ազոխ կերան, զաւակների ատամներն առան...»:

Եւ ես համարվում եմ Վասակի ու Մեհրուժանի զաւակ...

Դէմքիս՝ վառված ամօթի տեղ՝ անմիջապէս երևում է նզովանքի բուռն արտայայտութիւն...

Եթէ Վասակն ու Մեհրուժանը, ազգի տագնապալից օրերին, լինէին հաշտ, համերաշխ, համաձայն ու միաբան՝ հայ ժողովրդի գոյութիւնը իրանց արեամբ պահպանել ձգտող ու տենչացող մինիստրների հետ, կը գլորվէին արդեօք դաւաճանութեան անարգ գրկի մէջ...

Կասկածից վեր է, ուրեմն, որ անմիաբանութեան դռնից ներս մտնելով՝ ուղևորը անխուսափելիօրէն հասնում է դաւաճանութեան և մատնիչութեան իջևանը...

Այս երկու՝ ազգ անուանարկող յատկութիւնները, երևում է, հէնց էն գլխից են բնաւորվել մեր հոգու ծալքերում...

Արդեօք մեր խիստ անկուլտուրականութիւնն է եղել այդ երևոյթի պատճառը, թէ մեր մօտիկ հարևանութիւնը կեղծաւոր պարսիկների, խաղաղասէր ասորեստանցիների, բարոյազուրկ մարերի, նենգ յոյների, խորամանկ հռոմայեցիների և այլոց հետ... մեր պատմութիւնը չէ տալիս այդ առիթով պարզ ու մեկին լուսաբանութիւն...

Եթէ սոսկ անկուլտուրականութիւնը լինէր մեր այդ վատ ժառանգութեան պատճառը, ապա ներկայիս կուլտուրան, որին, անկասկած, փարել ենք մենք, պէտք է որ հիմն ի վեր բարեփոխէր մեր հոգեկան կազմը և վանելով նրա ծալքերից յիշեալ յոռի յատկութիւնները՝ նրանց թափուր տեղերը պիտի ողողէր առաքինի յատկութիւններով...

Ըստ իս՝ ուրեմն՝ երկրորդ պարագան է պատճառը... մեր անմիաբանութեան և այնուհետև... մեր դաւաճանութեան...

Ու շալակած հի՜ն օրերի մռայլ անդունդից անմիաբանութեան ու դաւաճանութեան ծանր, կեղտոտ բեռը և անցնելով դարերի՝ մեզ ընծեռած անընդմէջ սարսափների, լըլկումների, տանջանքների, մահերի, դեգերումների ու ողբումների տեսակ-տեսակ և և կե՛րպ-կե՛րպ բովերից... ահա եկել հասել ենք անփառունակ 1914—15 թւականներին... դարձեալ սև երեսով... մռայլ հոգով...

Մեր ուղին՝ սկսած Հայկից մինչև 1914—15 արիւնոտ տարին՝ պահել ենք անշեղ, անսայթաք...

Չը դաւաճանելով մեր ուղուն՝ դաւաճանել ենք սակայն... մեր հոգուն...

«Մշակը» ներկայ արիւնոտ օրերի հէնց էն գլխից տուեց մեզ հայի վրդովեցուցիչ անմիաբանութեան նկարագրութիւնը...

Մեզ բաժին հասած ընդհանուր, ազգային աղէտի և վշտի ամօքման պահին՝ մեր մէջ ջլատ ոյժերով գործելու տենչով վառված ընկերութիւններ եղան...

Արդեօք ժամանակը չէ՞, որ ցած բերենք մեր ուսերից մեր դարաւոր բեռը...

Դարձեալ «Մշակը» մի ամբողջ շաբաթ միաբան և հաշտ-համերաշխ գործունէութեան շեփոր խփեց...

Նրանք՝ ովքեր պարտականութիւն ունեն ստանձնած այդ շեփորի ձայնը ամենքից շուտ լսելու... չըմեղ ձևացան և... չը լսեցին...

Բայց նրանք... ունեն ականջ...

Սակայն լսում է միայն... նրանց կրքի, քմահաճոյքի, նաև սին փառքի տիրանալու անարգ տենչի ականջը...

Դո՛ւք, պարոններ, որ ազգի միջոցներով ազգ էք ուզում օգնել ու խնամել, վիշտ էք ուզում սփոփել, վէրք էք ցանկանում դարմանել, ցաւ էք կամենում ամոքել, հայութիւնն ու Հայաստանն էք ուզում փրկել...

Սթափվեցէք...

Ներս էք մտել անմիաբանութեան դռնից...

Ո՞ւր էք գնում... Նահանջեցէք...

Ճանապարհը, որով առաջ էք գնում, տանում է ձեզ դէպի դաւաճանութեան և մատնիչութեան գիրկը... հեշտոտ գիրկը...

Սա ծնվում է... անմիաբանութիւնից:

Մնողն ուղարկվում է ձեզ... իր զաւակի մօտ:

Վերջինս հրապուրիչ է և խիստ կարճ ժամանակով շոյող՝ մարդկային հոգու բոլոր տկարութիւններն ու թուլութիւնները, վերցրած մինչև սին փառասիրութիւնը...

Ներկայ դարիս կուլտուրան, որի հետ միացած էք դուք մօտից, երևում է, կարողութիւն չունի պոկելու ձեր հոգին այն կեղտոտ բեռնից, որը վերցրել էք դարեր մեզանից առաջ և որի ծանրութեան տակ հեծեք չէ, որ ինքներդ էք ընկնում և հևում, այլև միշտ ընկած, յար հևած և այժմ ազատ շնչի կարօտ հայ ժողովրդին ևս դնում էք այնպիսի մի դրութեան մէջ, որ նա վերստին ընկնի ու հևայ...

Եթէ չը փոխէք ձեր ուղին, այն ուղին՝ որ ձգվում է ձեր և առասպելական Հայկի միջև... Եւ եթէ չը դադարէք ձեր անմիաբան, անհաշտ ու ջլատ գործունէութեամբ բազմապատկել հայի վիշտ ու տառապանքը...

Ժողովուրդը՝ որի անունից և միջոցներով կենդան եք դուք՝ կը գտնի շուտով ելք... փոխելու իր վերաբերմունքը դէպի ձեզ և սանձահարելու ձեր կիրքը...

Վայրկեանը պահանջում է, ո՛վ անմիաբաններ, որ միաբանվելով բոլորվէք հայ ժողովրդի փրկութեան սուրբ գործին նուիրված մի ընդհանուր աշխատանքի շուրջը...

Ու դրանով ստիպած լինէք, որ մենք ևս բոլորվենք ձեր շուրջը...

Միսակ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԷՏԵՐԻ ԿԱՆՈՆԱՒՈՐՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Ղշլաղ, 28 օգոստ.

Հայ Գիւղատնտեսական և Տնայն. Ընկերութիւնը մի քանի ամսվայ ընթացքում հիմնել է հայաշատ գաւառների նշանաւոր վայրերում 6—7 գիւղատնտեսական վարձակէտեր և նրանց հարստացնելով կարևոր մեքենաներով ու գործիքներով աշխատում է աւելի օգտաւէտ ու մատչելի դարձնել մեր բազմակարիք գիւղացիութեան:

Այսպէս, օրինակ, մի ամիս առաջ ուղարկված է Ն.-Բայազէտի, Ջալալ-Օղլու, Ուզունլարի, Հօսմի, Արխվալու և Ղշլաղի վարձակէտերի համար բաւական թւով նորատեսակ գութաններ, սերմնացրիչ և հնձող ու խոտ հարող մեքենաներ:

Դժբաղդաբար գիւղից վարձակէտի հնձող մեքենայի մի չափազանց կարևոր մասն անզգուշութեամբ՝ ճանապարհին կորցվելով, չաշխատվեց, հակառակ տեղական գործողների ցանկութեան, ներկայ աշխատանքի դժուարացած պայմաններում գործադրութեան մէջ դնել:

Ինչևիցէ ցանկալի է, որ գոնէ առաջիկայ սէզօնին մեքենան ծառայելով իր անմիջական նպատակին զգալի օգնութեան հասնի մեր ուժասպառ գիւղացիութեան դաշտային զբաղմունքին:

«Լաւ է ուշ, քան երբեք»...

Շրջանիս գիւղացիութիւնը, ինչպէս առիթ եղած դէպքում մի քանի անգամ շեշտել եմ, գրկաբաց ընդունելով Ընկերութեան հրահանգչին՝ անչափ համակրանքով վերաբերվեց դէպի նորակազմ վարձակէտը և մի քանի ամսվայ ընթացքում կանոնաւորապէս օգտվեց այնտեղ եղած գործիքներից ու մեքենաներից:

Ղշլաղի հասարակութիւնը վարձակէտի բացման օրը խոստացաւ գիւղատնտեսական գործիքներն ու մեքենաները խոնաւութիւնից ու անձրևից պաշտպանելու և կորչելուց ու փչանալուց ազատելու համար՝ շինել իր նիւթական միջոցներով և Ընկերութեան աջակցութեամբ ու խորհուրդներով մի կանոնաւոր պահեստ, յանձնարարելով հոգաբարձութեան այդ մասին յայտնել Ընկերութեան տնօրինութեան:

Այս նպատակով եղան մի քանի գրաւոր ու բանաւոր դիմումներ:

Ընկ. վարչութիւնը, դէմ չը լինելով այդ արժէքաւոր նախաձեռնութեան, չի ցոյց տուել դեռևս գործնական աջակցութիւն:

Բայց և այնպէս գործը կանգ չառաւ: Տեղիս հոգաբարձութիւնը, յաղթահարելով ներկայ պատերազմի գիւղիս՝ վրա թողած ծանր հետևանքները, արդէն ձեռնարկել է գիւղատնտեսական պահեստի շինութեանը, որը մի քանի օրից յետոյ բոլորովին պատրաստ լինելով կը տեղաւորի իր մէջ բոլոր գործիքներն ու իրերը:

Մնում է, որ Գիւղատնտեսական Ընկ., օգտվելով գիւղական հասարակութեան տրամադրութիւնից և բարեհաճ վերաբերմունքից՝ վարձակէտի գոյութիւնն ապահովելով՝ դնի կանոնաւոր հիմունքների վրա, որով և նպաստի նորագոյն գործիքների տարածման ու ժողովրդականացման - գիւղացիութեան լայն խաւերում:

Ղշլաղի հասարակութիւնը խորապէս գիտակցելով ռացիոնալ գիւղատնտեսութեան խոշոր նշանակութիւնը, տրամադիր է մօտիկ ապագայում Գիւղ. Ընկ. տնօրինութեան տակ դնել «Փաշի-Գեղ» կոչվող գեղեցկատեսիլ հողամասից մի ընդարձակ կտոր՝ փորձնական դաշտ և տնկարան հիմնելու համար:

Ինչպէս վերև յիշեցինք, Գիւղատնտեսական Ընկերութիւնը ներկայումս ունի զանազան վայրերում 6—7 վարձակէտեր, որոնց ղեկավարութեան ու հսկողութեան ծանր պարտականութիւնը դրված է մի հրահանգչի վրա, որն որքան էլ եռանդուն ու աշխատասէր, բարեխիղճ ու ընդունակ լինի, դարձեալ չի կարող արդարացնել վարչութեան յոյսերի քառորդը՝ վերահասու լինելով վարձակէտերի ընթացիկ գործերին և տալով գիւղացիներին հարկաւոր խորհուրդներ ու հրահանգներ:

Այսպէս, օրինակ, հրահանգիչը դուրս գալով Թիֆլիսից վարձակէտերին այցելելու համար՝ պէտք է կատարի մի երկարատև շրջագայութիւն.

I—II, օր. Սանահին, Ուզունլար. III—IV՝ Ջալալ-Օղլի, 30 վերստ. VI—VII՝ Ղշլաղ, 40 վերստ. VIII—X՝ Բաշ-Ապարան, 50 վերստ. XI—XII՝ Արխվալի, 30 վերստ. XIII—XV՝ Հօսոմ, 30 վերստ. XVI—XVII՝ Մ.-Ղարաքիլիսայի վրայով՝ Նոր-Բայազէտ:

Աւել է, որ հրահանգիչը մի թռուցիկ հանդիպում կատարելու համար իր տրամադրութեան տակ պէտք է ունենայ մի ամիս ժամանակամիջոց, մի կողմ թողնելով այսպիսի աննպատակ ճանապարհորդութեան կասկածելի արդիւնքը:

Իմ համեստ կարծիքով՝ գործի աջողութիւնը պահանջում է, որ Գիւղ. Ընկ., կանգ չառնելով ծախսերի առաջ, իր վարձակէտերը, նայելով նրանց հեռաւորութեան ու տեղագրական պայմաններին, բաժանի 3—4 րայոնների և նրանց հսկողութիւնը յանձնի նոյնքան մասնագէտ-հրահանգիչների, որոնք եթէ ոչ ամեն օր, գոնէ շաբաթը մի անգամ այցելելով վարձակէտեր՝ կը ծանօթանան բոլոր գործերի հետ և կը տան հարկաւոր ցուցմունքներ:

Հայկական հիմնարկութիւնների աւանդական սովորութիւնն է, որ իրանց ենթարկվող պաշտօնակատարին ծանրաբեռնեն այնքան գործերով, որ նա ընկճվելով նրանց ծանրութեան տակ՝ չը կարողանայ ցոյց տալ շօշափելի գործունէութիւն:

Նոյն տարօրինակ գործելակերպը միթէ չի նկատվում մեր դպրոցական կեանքում:

Երևանի 25,000 քառ. վերստ տարածութիւն ունեցող թեմի 200-ից աւելի ծխական դպրոցների վերահսկողութեան պատասխանատու ու դժուարին գործը մինչև օրս յանձնված է երկու տեսչի, որոնք ուս. տարվայ ընթացքում գոնէ մի անգամ հնարաւորութիւն չունէին այցելել իրանց խնամքին կարօտ դպրոցները՝ մօտիկից ծանօթանալով կրթական ցաւերի ու կարիքների հետ:

Ահա հէնց նման տխուր երևոյթն արմատախիլ անելու համար խիստ ցանկալի է, որ Գիւղ. Ընկ. արգոյ վարչութիւնը լուրջ ուշադրութիւն դարձնէր շօշափածս ցաւոտ խնդրին:

Մ.

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ-ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Արդէն պաշտօններ են ստանում սկզբի շաբաթներում Գրական-Գեղարվեստական Սալոնի՝ Հայաստանի բեկորների համար բացած ապաստարանում և ամեն օր անընդհատ գալիս են նոր փախստականներ:

Նշանակալից է և շատ մեծարժէք ներկայ ցուցակի մէջ օր. Նուարդ Սիմէօնեանի 3 ր. նուէրը: Սա ապաստանել էր մեզ մօտ և ահա պաշտօն գտնելով, իր անդրանիկ վաստակից բաժին է հանում իւրայիններին:

Մայրապետ կոյս Հռիփսիմէ Թայիրեանը վերադառնալով ամարանոցից աճապարել էր առաջին այցը Հայաստանի բեկորներին տալու: Սփոփելով փախստականներին և ընծայաբերելով իր լուման, յայտնեց գոհունակութիւն, որ իր բացակայութեամբ շնորհանդէպ իր տեղապահն ու միաբանութիւնը որդեգրել են կուսանոցին Ալաշկերտի հովտում ռուս զօրքի գտած Մանուկեան մանկիկ քոյրերին: Աւելացրեց մայրապետը, որ մեծ քոյրը՝ Մովինարին ուղարկում է արդէն Նորաշէնի օրիորդաց դպրոցը, իսկ փոքրիկ քրոջ համար էլ վարձեց հէնց ապաստարանվածներից մի դայեակ:

Ստացվել են նուէրներ՝ իրերով.

Բժշկապետ պ. Մինաս Տէր-Մկրտչեանից սրտաբուխ՝ թանգագին գանձ՝ իր մօր գլխի պաճուճանքը, արծաթի հնաշէն գուլաներ շղթաների մէջ և երկու չարչաթի արծաթեայ պատառաքաղ: Այս իրերը չեն վաճառվի, այլ վիճակ կը գցվեն: Ադելխանեանի գործարանի մի խումբ ծառայողներից 8 զոյգ զանազան կօշիկներ: Տէր-Գրիգոր ա.-ք. Մանդակունուց 1) 10 «Հանրամատչ. բժշկարան», 2) 1 հատ «Ոսկի բարեկամ», 3) «Ս. Գիրք Աշխարհագրութեան», 4) 10 հ. «Զգուանքներ»: Աւետիս և Աննա Թառումեան ամուսիններից ճերմակեղէն, զգեստ 10 կտոր և 18 զոյգ գուլպա: Սանդրօյից մի մեծ կապոց զանազան հագուստեղէն: Եղիսաբէթ Փանեանից տղամարդի մի ձեռք հագուստ: Գարեգին Մելքեանից մի պիջակ և մի ժիլեթ:

Ա. Մ. և Կ. Զ. Տէր-Առաքելեան ամուսիններից մի ոչխար: Յովհաննէս Կաճկաճեանից մի ոչխար: Եգոր և Նունէ Սարգսեաններից մի ոչխար յիշատակ իրանց ծնողների Սոֆիա և Բաղալ Սարգսեանների: Դաւիթ և Մարգարիտ Գրիգորեան ամուսիններից 3 պուդ հաց, 3 պուդ բրինձ և մէկ ոչխար (15 ր. էլ դրամով), եղբ. Բաւէեաններից 2 ոչխար:

Դրամով՝ Գերշնորհունակ մայրապետ կոյս Հռիփսիմէ Թայիրեանից 10 ր., գէն. Վասիլ Միք. Թամամշեանից 100 ր., Եկատերինէ Ներսիսեանից 1 ր., Լևոն Տէր-Գրիգորեանից 3 ր., Դաւիթ և Մարգարիտ Գրիգորեան ամուսիններից 15 ր. (ուտեստեղէն): Դ. Գրիգորեանից 1 ր. (այգում գնած լուսանկարի վճար), եղբ. Գէորգեաններից 5 ր. (ամսավճար), Լևոն Ամէեանից 5 ր., օր. Նուարդ Սիմէօնեանից 3 ր., այս օրիորդը Հայաստանի բեկորներից է, որ ապաստարան էր գտել Գրական-Գեղարվեստական Սալոնի Հրատապ սփոփանքում, և որի միջոցով պաշտօն գտնելով, ընծայաբերեց իր երախայրիքը ապաստարանին: Մանկաբարձուհի Աստղիկ Դանիէլեանից 5 ր., Գէորգ Լաչարեանից 1 ր., օֆիցէր Գրիգոր Արէլեանից 1 ր., Ս. Ս. Կ.-ից 20 ր., կոյս Աննա Խոճամիրեասեանից 3 ր., օր. Նատալիա Ս. Տուրինեանից 5 ր., տիկին Գ.-ից 5 ր., Գեղամ Պապանեանից 4 ր. 50 կ. (պատկերների վճար): Բագուից՝ հ. Ներսէս ք. Տէր-Կարապետեանից 5 ր., Վարոնէժից Տիրան Մարտիրեանից 3 ր.:

«Тиф. Лис.»-ի միջոցով՝ բժշ. Մ. Զ. Բանանեանից 15 ր.. մանկավարժ М. Д. Ельчуков-ի դագաղին պսակ դնելու փոխարէն:

«Մշակի» միջոցով՝ Անահիտ Ղազազեանից 5 ր., Մելիքի միջոցով հաւաքված 5 ր.:

Տ. Նազարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Երկու հասարակ դագաղ

Զաքաթալա, 24 օգոստոսի

Զաքաթալայի բերդում գտնվող երկրապահ զինուորներից մէկը, Կուզմա Կրիցենկօն, երկար ժամանակ կարօտում էր իր անբաժան ընկեր տիկնոջն ու միակ 2—3 տարեկան որդուն։

Նա բերել տուեց նրանց իր մօտ և սկսեց երջանիկ կեանք վայելել։

Սակայն այդ երջանկութիւնը շատ կարճատև եղաւ. երկու ամուսիններն ու որդին մալարիա հիւանդութիւնից բռնվեցին։ Երեքին էլ անզգայ դրութեան մէջ փոխադրեցին քաղաքումս գտնված գիւղական հիւանդանոցը, ուր միաժամանակ առանձին սենեակներում Կրիցենկօ ամուսինները վախճանվեցին, թողնելով անտէր, անտիրական իրանց միակ որդուն։

Երէկ, ամսիս 23-ին, կատարվեց նրանց թաղումը. ներկայ էին բազմաթիւ հայեր։ Պատարագչին քահանան, հայր Միխայէլ Կուլօշվիլին, զգացված քարոզ-դամբանական խօսեց մաքուր հայերէն լեզուով, գովաբանելով հայերի մարդասէր վերաբերմունքը և այլն։

Սօյզազէ

Կարկտի աւերմունքը

Նոր-Բայազէտ, 27 օգոստոսի

Օգոստոսի 21-ի երեկոյեան մեծ կարկուտ տեղաց Գեղարքունեաց լեռների վրա և մասամբ փչացրեց մի քանի գիւղերի ցանքսերը, որոնք ընկած են այդ լեռների փէշերին։ Աւելի վնասներ են կրել Քեօսա-Ահմեդ և Քարիմ-Քենդ գիւղերը, իսկ Տաշքենդի, Դալի-Ղարդաշի ցանքսերը մասնաւորապէս են վնասվել։ Վնասված գիւղերի ժողովուրդը մեծ տագնապի մէջ է ընկել, ապագայում իր կենսական դրութիւնը պահպանելու նկատմամբ, մանաւանդ այս անուելի թանգութեան միջոցին, երբ աշխատող ձեռն էլ միւս կողմից է պակասել։ Այդ պատճառով վնասված գիւղացիներն իրանց ջարդված արտերի հացաբոյսը ցոյց տուեցին կառավարութեանը և խնդրեցին օգնութեան համնել։ Վնասների չափը, ինչպէս լսեցի, արձանագրված և ներկայացված է ուր հարկն է։

Այսօր երեք օր է, ինչ արևմտեան տաք և կիզիչ քամի է փչում, որ մեծ վնաս հասցրեց հացաբոյսերին։ Ցաւ է ասել, որ մեր հողագործութիւնը այս քանի տարի է՝ ոչնչով չէ մխիթարված, քանի որ մի տեղ կարկուտն է ծեծում նրա ցանքսը, միւս տեղ քամին է քշում, մի երկրորդ տեղ՝ մուկն է կտրում, մի այլ տեղ՝ յորդ անձրևներն են փչացնում, մի ուրիշ տեղ՝ խորշակը փչացնում և այլն։

Գ. Սինանեան

Ընթացիկ կեանքը Կարսում

Կարս, 26 օգոստոսի

Քաղաքումս արդէն խոլերան պաշտօնապէս ճանաչված է և եղել են մի քանի զոհեր։ Դրա առաջը առնելու համար տեղական ոստիկանութիւնը հարկաւոր կարգադրութիւնները արել է։

Քաղաքիս բոլոր բաղնիքները կողպվեցին զինուորական իշխանութեան հրամանով, որովհետև բաղնիքներից դուրս գնացած կեղտոտ ջրերը խառնվելով գետին՝ նպաստում են զանազան հիւանդութիւնների շատանալուն։

Հունձը արդէն սկսվել է. բերքը արդիւնաւոր է. բայց աշխատաւոր ձեռքերը շատ քիչ են։

Թանգութիւնը ծայրայեղութեան է հասել։ Մի ձմերուկը ծախվում էր 1 ր. 20 կ., այդպէս և ամէն բան։ Այժմ արգելված է. ոչ մի տեսակ միրգ Կարս չեն բերում։ Միայն Աստուածածնի տօնին խաղողի երես տեսանք։

Այսօր բոլոր խանութները փակ են. Ալէքսանդրօպոլից բերում են Սօթը-Վիրաց պատկերները՝ խոլերայի պատճառով։

Ս. Տէր-Մելքիսեդէկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրից Թիֆլիսի նահանգի ազնուականութեան պարագլխի պաշտօնակատար իշխ. Դ. Է. Ջելօկայեվ ստացել է հետևեալ հեռագիրը.

Սրտագին շնորհակալ եմ Թիֆլիսի նահանգի վրաց ազնուականութեանը աղօթքների և հաւատարիմ հպատակութեան զգացմունքների արտայայտութեան համար. ՆԻԿՈԼԱՅ

Այս հեռագիրը պատասխան է հետևեալ հեռագրի, որը Թագաւոր Կայսրին ուղարկել է իշխ. Ջելօկայեվ. «Ջերմ աղօթքներ վերառաքելով Բարձրեալին, թշնամու վերաբերմամբ յաղթութիւն շնորհելու ռուս քաջերի զօրականութեան, իր Թագակիր Պետի Գերագոյն ղեկավարութեան ներքոյ, Թիֆլիսի նահանգի վրաց ազնուականութիւնը արկանում է առ ոտս Ջերդ Կայսերական Մեծութեան իր հաւատարիմ հպատակութեան և անսահման սիրոյ զգացմունքները։ Մեծ փորձութիւնների օրերին վրաց ազնուականութիւնը և վրաց ժողովուրդը բաղդաւոր են տեսնել սիրելի Միապետի հոգատարութիւնը Կովկասի ժողովուրդների մասին՝ Ջերդ Կայսերական Մեծութեան Փոխարքայ կոչելով երկրորդ Հայրենական պատերազմի Օգոստափառ հերոս Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչին»։

◆ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչից իշխ. Ջելօկայեվը ստացել է հետևեալ հեռագիրը.

Հոգով շնորհակալ եմ Թիֆլիսի նահանգի վրաց ազնուականութեանը՝ արտայայտված զգացմունքների և ողջոյնի համար։ Հաստատ հաւատում եմ Աստուծու օգնութեան՝ ույժիս չափ օգուտ բերել Կովկասի ժողովուրդներին, և որ Տէրը կօրհնի կովկասեան քաջարի հերոսական բանակին նորանոր սխրագործութիւններ անելու։

Գեներալ-ադիւտանտ Նիկօլայ։

Այս հեռագիրը պատասխան է ազնուականութեան պարագլխի պաշտօնակատար Ջելօկայեվի հետևեալ հեռագրի. «Մեծապէս ուրախացած լինելով Ջերդ Կայսերական Բարձրութեանը Կովկասի Փոխարքայի պաշտօնին կոչելու առիթով և դրանում տեսնելով Միապետի բարեհաճութիւնը դէպի Կովկասի ժողովուրդները, Թիֆլիսի վրաց ազնուականութիւնը ջերմապէս ողջունում է Ջերդ Կայսերական Բարձրութեան։ Կովկասեան մեր փառաւոր բանակը, Ջեր ղեկավարութեան ներքոյ, նորից կը վաստակի փառաւոր յաղթութիւն թշնամու վերաբերմամբ, իսկ Կովկասի ժողովուրդների քաղաքացիական կեանքը յանձին Ջեր կունենայ իր իմաստուն կառավարչին»։

◆ Պրապօրշչիկ Ցարութինեանին զինուորական դատարանը դատապարտել էր մահվան գնդակահարութեան միջոցով Թիֆլիսի դատաստանական պալատի քարտուղարի օգնական Ղամբարեանին սպանելու համար։ Այժմ դատարանը փոխել է նրա պատիժը ցմահ տաժանակիր աշխատանքի։

◆ Երէկ, սեպտեմբերի 1-ին, կայացաւ քաղ. դումայի արտակարգ նիստը։ Նիստից առաջ կայացաւ խրատատուների մասնաւոր խորհրդակցութիւնը քաղաքային գործերի վերաբերմամբ։

◆ Քաղաք. վարչութիւնը առաջիկայ նիստերին դումա է մտցնելու մի ընդարձակ զեկուցում մատակարարական գործերի մասին։

◆ Օգոստոսի 31-ին № 40 լազարէթում խոլերայով հիւանդներ կային 112 հոգի, խոլերայով կասկածելի 13։

◆ Սեպտեմբերի 1-ից պարապմունքները քաղաքային վարչութեան մէջ տևելու են մինչև ժամը 3-ը։

◆ Որովհետև պրոֆ. Միրօտվօրցեվ ուղարկվում է արևմտեան ռազմաճակատը, այդ պատճառով նրա պարտականութիւնները՝ Կարմիր Խաչի բժշկական մասի կառավարութեան վերաբերմամբ, կատարելու է բժ. Ն. Ն. Լեբեդեվ։

◆ Ստացանք «Հայ կամաւորների խմբերին օգնող Երևանի Հայուհեաց Ընկ.» վեցամսեայ գործունէութեան համառօտ հաշիւը, որից երևում է, որ ընկ. այդ ժամանակի ընթացքում ընդհանուր մուտք ունեցել է 5472 ր. 77 կ., որից ծախսել է 4699 ր. 79 կ.։ Ընկ. դրամարկղում այժմ կայ 772 ր. 98.

◆ Ստացանք Շուշու Ջուլհականոց-դպրոցի 1914 թ. համառօտ հաշիւը, որից երևում է, որ Ջուլհականոց-դպրոցը մի տարվայ ընթացքում, դրամարկղում ունեցած 340 ր. 84 կօպէկի հետ միասին, մուտք ունեցել է 3282 ր., որից ծախսվել է 2191 ր. 19 կօպէկ։ Դրամարկղում առ 1-ն յունվարի 1915 թ. մնացել է 143 ր. 78 կ.։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Համազէմստվային և համաքաղաքային միութիւնների համագումարը կայանալու է Մոսկվայում սեպտեմբերի 7-ին։

◆ Զինուորա-ուսումնական հաստատութիւնների գլխաւոր վարչութիւնը յայտարարում է, որ Բարձրագոյնս թոյլատրված է թոյլ տալ ընդունելու առանց քննութեան զինուորական դպրոցները բոլոր միջնակարգ դպրոցների այն սաներին, որոնք ունեն վեցդասեան դասընթացքի վկայական, օրինակ՝ որոնք աւարտել են ուսուցչական ինստիտուտները, ուսուցչական սեմինարիաները, ուսուցչական դպրոցները և քաղաքային 6-դասեան կրթարանները։

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են Պետրօգրադից, որ նոր լուրերի „համաձայն՝ Պետ. Դուման արձակվելու է մինչև սեպտեմբերի 15-ը։

◆ Մինիստրների խորհուրդը երկար քննութիւնից յետոյ գտաւ, որ առաջադէմ բլօկի առաջարկութիւններից երկուսը, այն է՝ փոխել կառավարական կազմը և իրաւունքներ տալ հրէաներին, անընդունելի են։ Այդ մասին Գորեմըկինը զեկուցանելու է Թագաւոր Կայսրին։ Միաժամանակ մինիստրների խորհուրդը որոշել է յանձնել ներքին գործերի, արդարադատութեան և առևտրի մինիստրներին ու պետական վերահսկչին բանակցել բլօկի հետ՝ որևէ կոմպրոմիսային համաձայնութեան յանգելու համար։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վրաց լրագիրներում տպվող գաւառական թղթակցութիւններից և խմբագրական յօդուածներից երևում է, որ ամբողջ Վրաստանում չը կայ և ոչ մի անկիւն, որ տուժելիս չը լինի անբերրիութիւնից և բնական պատահարներից։ Ուստի վրաց հասարակական բոլոր հիմնարկութիւնները և մամուլը ամենալուրջ կերպով զբաղված են այն հարցով, թէ ինչ միջոցներով կարելի է օգնութեան գալ սովի ենթարկված գիւղացիութեանը։

◆ Աշնիի շրջանի Իանէթ գիւղում, «Սախ. Փուրցել» լրագրի ասելով, ուսուցիչների երկուսից մուծն ընկնելուց յետոյ արգելված է փողոցներ դուրս գալը։ Նոյն գիւղում, աւազակներին ապաստան տալու պատճառով 5 հոգի բանտարկութեան են ենթարկված 3-ական ամսով։

◆ Թիֆլիսի պրապօրշչիկների առաջին դպրոցի կուրսը վերջացնողները, թւով 120 հոգի, ստորագրութեամբ իրանց միջև ժողովել են 600 ռուբլի յօգուտ վրաց թատրոնական շինութեան գործի։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ասիական օպերէտ

Թիֆլիսի ժողովարանում օգոստոսի 31-ին ներկայացվեց հայերէն «Նա չը լինի,—սա լինի» օպերէտը, որի թարգմանութիւնը թիւրքերէնից կատարել է Ս. Կարապետեանը։

Հարկաւ, կոլորիտ է այս օպերէտը իր ասիական (պարսկական) երաժշտութեամբ, որի ուրոյն արտայայտութիւնը այնպէս հարազատօրէն դարձված է արևելեան գործիքներով։ Ժամանակը իսկ թէ դրել է իր դրօշմը նրա սկզբնական հարազատութեան վրա, մանաւանդ թիւրքերէն խառնուրդով, սակայն օպերէտի երաժշտութիւնը՝ իր շատ միամիտ բովանդակութեամբ հանդերձ՝ արևելեան մոտիվներով ախորժալուր է և անգամ տպաւորիչ ու յուզող առաւել մեր ժողովրդական մասսաների համար։

Եւ մենք այդ տեսակ օպերէտների վրա նայում ենք նախ իբրև նորութեան ու ապա իբրև ժամանցութեան վրա, ըստ որում վաստակաւոր է այս օպերէտը նախաձեռնողների աշխատանքը։ Իսկ ժողովարանի աւագների խորհուրդը ինքնին ընդառաջել էր իր այցելուների որոշ մասի ցանկութեան, կազմակերպելով այդ օպերէտը. բայց նա այդ չը պէտք է դարձնէ գեղարուեստական ճաշակը զարգացնելու աղբյուրներից մէկը, որի առիթով ամենայն օր նուագում է սիմֆոնիկ օրկէստրը ժողովարանի այգում։

Գալով խաղին՝ մենք մատնանշելու ենք ամենից առաջ նորութեան նախաձեռնող Գ. Փիրումեանի վրա, որ իր բազմակողմանի բեմական ընդունակութեան շնորհիւ տարաւ օպերէտի կենտրոնական Մաշտի Իպատի դերը աչքի արտաքինով ու չընկնելով շարժի մէջ։

Ապա յիշենք նրա դեռատի հարսնացու Գիւլնազ խանումի դերակատար տ. Սաթենիկին, որ ունի մեղմ ու յստակ ձայն, բայց թերանում է շարժումների ու դիկցիայի մէջ։ Ազնիւ Սանամ է օր. Աստղիկը իր անբռնազբօսիկ ու աշխոյժ խաղով։ Վատ չէին Գիւլնազի պարտնեօր Սարվարի դերում—Արզարեանը, որի ձայնի տեմբրը լաւ է, և Գիւլնազի հօր դերում—Ալլահվերդեանը։

Ջափազանց տիպիկ է Ղազարեան համալի դերում։

Ասիական նուագախումբը՝ յայտնի թառահար Բալա Մելիքեանի ղեկավարութեամբ՝ համակերպվում էր խաղին և տեղ-տեղ իր աչքող solo ու խմբական նուագով ստեղծեց հանդիսականների մէջ նպաստաւոր վերաբերմունք դէպի իրեն։

Հանդիսատեսների թիւը չափազանց խուռն էր, որի պատճառով էլ կարգապահութիւնը բացակայում էր։

Ռեցէնզենտ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գանձակ, 27 օգոստոսի

Անհերքելի աղբիւրներից լսվում է, որ Գանձակի գաւառում բնակվելու գաղթականութեան մի մասը, 1500 հոգի, միայն գալու է երկաթուղով մինչև Դալեար կայարանը և ապա բաշխվելու գիւղերի վրա. իսկ միւս մեծագոյն մասը դարձեալ Ղազախի գաւառից մտնելու է Գանձակի գաւառը՝ սրա սահմանագլխի Նոր-Իվանովկա գիւղի վրայով և ապա ցրվելու սահմանված չափերով նախապէս բաշխ ծրագրի որոշված գիւղերը։

Այս առիթով կարևոր եմ համարում գաղթականութեան տեղափոխութեան պարտականութիւնները ունեցող յանձնաժողովներին ի գիտութիւն յայտնելու տեսանները, 1045 հոգի աւարի փախստականներին ընդունելու և ճանապարհելու ժամանակ հայ քահանաների հետ Իվանովկա գիւղից մինչև Գետաբեգ, 30 վ., թէև ճանապարհը համարվում է պողոտայ, սակայն այն աստիճանի վնասված է հեղեղներից, որ մինչև Սաւաստօվկա, 7 վերստ, կարելի է սայլերով գնալ. մնացածը պէտք է անցնել ձիով կամ ոտով. իսկ տեղափոխութեան վերջին եղանակը հնարաւոր չէ յոգնած և ֆիզիքապէս ջարդված գաղթականութեան համար. յետոյ, այս տարածութիւնը այժմ մի օրվայ մէջ չի կարելի անցնել. հարկաւոր է գիշերել թուրքաբնակ Կարամուրադ կամ Գեառգեառ գիւղերում, որոնք, թողած այլ անյարմարութիւնները, ոչ մի հնարաւորութիւն չունեն պատսպարելու մանաւանդ աշնանը, գաղթականական խմբերը, ինչպէս ցոյց տուեց նախկին օրինակը. և այս խմբերը պիտի միայն բացօդեայ, չունենալով հագուստեղէն։

Գանձակի գաւառի լեռնային գիւղերում, որոնք ի նկատի առնված են որպէս բնակավայրեր գաղթականութեան, սեպտեմբերի կէսերից սկսվում են ցրտերը, անձրևները և ապա ցեխը, որոնք, մի կողմից, առանց այն էլ հիւանդ ու թոյլ գաղթականներին աւելի կը հիւանդացնեն և վտանգաւոր հետևանքներ կը ստեղծեն. միւս կողմից՝ այն աստիճանի կը վնասեն ճանապարհները, որ տեղափոխութիւնը ոչ մի միջոցով հնարաւոր չի լինի Գետաբեգ-Դալեար պողոտայի երկու կողմում ընկած գիւղերը։ Այնպէս որ՝ ոչ մի դէպքում գաղթականական խմբերը ուղարկելու չէ Իվանովկա-Գետաբեգ գծով։

Փոքրագոյն չարիքն է խմբերը ուղարկել երկաթուղով Դալեար կայարանը. այստեղից կը գան Աննենֆելդ գերմանական գիւղը, անդատու կայան, կը հանգստանան և ապա կուղևորվեն նշանակված գիւղերը՝ օգտվելով Դալեար-Գետաբեգ և Դալեար-Գեօրգիեվսկ ճանապարհներից. և այս ձևով տեղափոխելու դէպքում իսկ՝ չափազանց շտապելու է և մեծ խմբերով ուղարկելու նրանց, երբ դեռ ևս եղանակները լաւ են և ճանապարհները ասանելի։ Հակառակ դէպքում, դրութիւնը կը ստեղծվի նոյնը, ինչ կը լինի Իվանովկա-Գետաբեգ գծով գալու ժամանակ, նախապէս պատրաստելու է հիւանդանոց մահճակալներով, բժշկական օգնութիւն և շուրջն Աննենֆէլդում։

Միւնոյն դրութեան մէջ են ճանապարհները Դելիժան-Իվանովկա գիւղը։ Իսկ Գանձակի գաւառի միւս մասի, Գետաշէնի, Ղարաչինարի շրջանները, գիւղերը ուղարկելու գաղթականութիւնը երկաթուղու գծով տանելու է Գանձակի կայարանը և բաշխելու գիւղերին։

Բայց, ես կարծում եմ, եթէ այդ հնարաւոր է գէթ փոքր չափով, բոլորովին չուղարկել փախստականներին Արարատեան դաշտերից դուրս, որտեղ կենտրոնացած են օգնութեան տեսակները, խուսափելու համար նորանոր դժբաղդութիւններից, որոնց անկասկած կենթարկվեն փախստականները, մարդկային կեանքի անհրաժեշտ բոլոր կարևոր միջոցների պակասութեան շնորհիւ, որոնք այնքան բնական երևում են նրանց կմախքների կոյտերի, մերկացած մարմինների, նքթած երեխաների, սովամահներից ապուշ կտրած կանանց, հոգու և մարմնի հաւասարակշռութիւնը կորցրած, կեանքից յուսահատված և դէպի աշխարհը ցասումով լցված այս նժդեհների իւրաքանչիւր շարժումի, խօսքի և հառաչանքի աղեխարշ ձայնի մէջ։

Անկախ այս բոլորից, չափազանց կարևոր է, որ վերոյիշեալ յանձնաժողովները ճիշդ տեղեկութիւններ տան տեղական հայկական մարմիններին փախստականների ժամանելու ժամանակի, տեղի և քանակութեան մասին, որպէսզի այդ մարմինները հնարաւորութիւն ունենան անմիջապէս հասնելու փախստականների իջնելու առաջին կայանը, ընդունելու նրանց և ճանապարհելու որոշեալ գիւղերը, որպէսզի աւելորդ թիւրիմացութիւններ չը ծագեն։

Այսպէս՝ Գանձակից հեռագրվեց ինձ ամսիս 20-ին, որ 1500 հոգի գաղթականներ են գալու Դալեար, դիմաւորեմ նրանց։ 22 ի երեկոյեան ստացայ հեռագիրը Իվանովկա գիւղում և քահանաների հետ դուրս եկայ Աննենֆէլդ-Դալեար։ Ճանապարհին իմացայ գաւառապետից 23-ին, որ դեռ ևս գաղթականներ չը կան։ Դիմումներիս պատասխանները ուշացան մինչև օրս։

Լեոն վարդապետ

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ)	»	12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր. երեկ.
	» Ջուլֆա	8 ժ. 53 ր. երեկ.
	» Բօրժոմ	3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4	Բաթումից —	5 ժ. 55 ր. երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր. երեկ.
№ 10	Բաթումից —	9 ժ. 51 ր. առաւ.
	Ջուլֆայից —	8 ժ. 11 ր. առաւ.
	Բօրժոմից —	7 ժ. 5 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաքուծութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծախկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—146

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնօվսկայա փող. № 18 (Վօրօնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարան. Սեմեօնօվսկայա, № 16.
(չ. ու. կ.) 1018. 100—77

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ԿԱՐԱՊԵՏԻ (Հալաբարի) եկ.-ծխ. դպ. բացուած ազատ են 4 երգի և 4 նկարչութեան դասեր. ցանկացողները կարող են դիմել մինչև ամսիս 4-ը. իսկ Ա. բաժնման ընդունելութիւնները շարունակվում են։
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
607. 1—1

400 ռուբլի նուէր
Վանէն Իգդիր մեր ճամբորդութեան միջոցին Երամեան եղբարց պատկանող մի [illegible] կային թուղթեր և կոլուածութեւղթեր [illegible] րուած ձեռք ճամբորդութեան պայուսակով մը։
Կը յայտարարեմք թէ՝ ով որ գտած է կամ տեղեկութիւն ունի, կրնայ առեթէն օգտուիլ. 400 ռուբլի կը խոստանամք անվնաս բերող և մեր ձեռք յանձնողին. իսկ պարտատեար կը ծանուցանեմք, որ առիթէն օգտուիլ չջանան։
ԵՐԱՄԵԱՆ ԵՂԲԱՐՔ
Հասցէ՝ Երևան, Բէբուտովսկի փող. № 96 կամ Թիֆլիս, Նիկօլայէվսկի փ. № 52, Ցակոբ Տէր-Ցակոբեանին։ 608. 1—1

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՀԻՄՆ. Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
(Երկու սեռի համար)
Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ., № 24.
Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր 10—12 ժ. առ., ժ. 5—7 երեկ.։
Պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 21-ից։
Տեղեկութիւններ տրվում և ուղարկվում են ձրի։
(չ. ու. շ.) 589. 0—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՒ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՅՈՎՀ. ԶԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ
Ընդունելութեան քննութիւնները օգոստոսի 24-ից։ Պարապմունքների սկիզբը՝ ուսումնարանում—սեպտեմբերի 1-ից, կուրսերում—սեպտ. 15-ից՝ I Тумановская ул. с. д. № 13.
534. 10—8

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ և ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր և այլն.
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Ընդունվում են նաև
Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով։
շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆօն № 67.

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.